



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6344

6345

6346

6347

6348

9(62)
U-31


1895 1875
1909
1904
1898

738

916

50

Printed in Turkey




ԱՐՈՒՍԱՀԼ ՀԱՅ

ՊՍՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ԵՒ ՎԱՆՈՐԷԻՑ ԵԳԻՊՏՈՍԻ

الشيخ ابي صلح الارمني



ՎԵՆԵՏԻԿ - Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1895

ԱՐՈՒՍԱՅԼ ՀԱՅ

3(62) և Կ.

Ա-31


ԱՐՈՒՍԱՀԼ ՀԱՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՑ ԵՒ ՎԱՆՈՐԷՒՑ ԵԳԻՊՏՈՍԻ

الشيخ ابي صلح الارمني

Գրեց Հ. Գրիգորյան Գ. Արմենացի



2017

ՎԵՆԵՏԻԿ - Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1895



11173

ԱՐՈՒՍԱՅԼ ՀԱՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՅԵԱՅ ԵՒ ՎԱՆՈՐԷՒՅ ԵԳԻՊՏՈՍԻ

الشيخ ابي صالح الارمني



Ա.

Ժէ գարուն կիսէն վերջ՝ Սաքս-կոթայ դուքսն՝ իր ազգակից և կրօնակից (լութե-րական) եթովպագէտ ՅՆ. Միքայէլ Վանսլէբ (Wansleb կամ Vansleb, ծն. յԷրֆուրդ, 1635 + 1679), երիտասարդը խաւրեց յԱփրիկէ, Ղփտեաց և Եթովպացոց կրօնից վրայ տեղեկութիւն և արեւելեան հին ձեռագիրներ ստանալու. զոր և ըրաւ սա, բայց չկըրցաւ զոհացընել զգուքսը: Ինքն ալ աժգոհ՝ գնաց ի Հոռով, կաթողիկեայ դաւանանքն ընդունեցաւ, և մտաւ ի կրօն Գովինիկեանց. յետոյ գնաց ի Պարիս, ուր ԺԻ Լոլզովիկոսի բանասէր պաշտօնեայն Քոլ

389
9 39

2004

պերտ՝ նորէն զըրկեց զնա յԵզիպտոս, ա-
րեւելեան ձեռագիրներ ժողովելու. որ և յա-
ջողեցաւ 330էն աւելի արաբերէն, թուրքա-
րէն և պարսկերէն գրքեր հաւաքել և բերել:
Ասոնց թուէն էր և արաբերէն պատմութիւն
մի Արա Սալին Հայ անուանելոյն: Չեռա-
գիրն բաւական հին է, 1338ին գրուած. հե-
ղինակն յայտնապէս հնագոյն, ԺԳ դարուն
սկիզբները վախճանած: Գրքին առաջին 20
թուղթերն կորած ըլլալով՝ անոր բուն վեր-
նագիրն կամ անունն այլ չկայ. բայց ետեւի
գրուածներէն՝ (որ բովանդակեն 113 թուղթ),
յայտնուի՝ որ պատմութեան նիւթն է՝ մեր
վերը նշանակածը: — Արաբագէտ և արեւ-
ելաբարբեր բանասէրք, ինչպէս Գատրըմէր
այս դարուս, և մանաւանդ Բենոդոյ (Re-
naudot) ԺԸ դարու սկիզբում, շատ բան
քաղեցին այս պատմըչէս, արեւելեան՝ և յառ-
կապէս Աղեքսանդրիոյ եկեղեցւոյ կամ պատ-
րիարքաց վրայօք: Ասոնց թարգմանած կտոր-
ներէն մենք այլ ատենօք օգտուելով՝ ազգային
տեղեկութիւններ տուած էինք (ի Ներս.
Շնորհալի և Պարագայ իշր. երես 162-70):
Արուսահլ՝ ասոնցմէ աւելի Հայոց վրայօք
գրած կարծուի ի բանասիրաց. որովհետեւ
հիմայ Հայոց վրայ պատմելով կու սկսի գիրքն,

ուսկից հետեւընեն թէ կորսուած առաջին
մասն այլ առաւելապէս մերայոց վրայօք էր:
Երկու դարէ աւելի շատ օտարաց այլ մեզ
այլ ցանկալի՝ բայց գրեթէ անմատչելի եղած
այս պատմագիրքս, (թէ արաբերէն լեզուով
և թէ դժուարընթերց գրչութեամբ ըլլալուն),
վերջապէս այս տարուանս սկըզբում՝ Փռան-
կաց ուսմանց պաշտօնէի շնորհիւ առ Անգ-
լիացի գիտնականս, ի լոյս ընծայեցաւ, թէ
բնագիր լեզուան և թէ անգլիարէն թարգ-
մանութեամբ, Էշետու անուամբ (B. T. Evetts
M. A) գիտնականի համալսարանին Օքսֆըր-
տի, ուր և տպագրեալ է, ճոխ ծանօթու-
թեամբք, որ գրեթէ հեղինակին գրածէն ա-
ւելի են. և զորս շատ մասամբ տուած է գիտ-
նագոյն մի, Բըտլէր Ալփրետ (Butler), հեղի-
նակ հետաքննելի գրքի մի՝ Եզիպտական հին
եկեղեցեաց վրայօք, (The ancient Coptic
Churches of Egypt). ձեռնտու եղած է մա-
սամբ և բազմահմուտ հայագէտ, և քանի մի
տարիէ վեր ծանօթ մեր ազգային բանասի-
րաց և ասոնց օրագրաց մէջ՝ Կոնիքիէր (F.
Fr. Conybeare), որ և զուարթառատ ազնը-
ւութեամբ ընծայեց մեզ օրինակ մի Արուսահլի
թանկ և հետաքրքրական գրոց. որոյ համար
կարեւոր պարտք համարիմք հրապարակել հօս
մեր շնորհակալութիւնը:

Գալով առ հեղինակն, զոր ըստ մեր մա-
 տենագրաց և ազգային սովորութեան՝ Արա-
 սանդ անուանեմք (փոխանակ Սալիհ ըսելու),
 ով և որոյ որդի և երբ յԵգիպտոս եկած ը-
 լայն՝ չի յիշուիր. որովհետեւ, ըստ վերոյգրե-
 լոցս, զբքին սկիզբն պակաս ըլլալով՝ իր
 վրայօք ըսածն այլ (եթէ ըսած էր) պակսի-
 բայց իր պատմութեան մէջ շատ հեղ զինքն
 և իր ժամանակակիցները յիշելէն՝ յայտնուի,
 որ 1170էն մինչեւ 1208 տարին ներկայ է
 եղեր ոմանց իր պատմած գիպաց և անձանց:
 Բայց աւելի ստոյգ ըսելով, ոչ միայն իր
 գրածին սկիզբն պակսած է, այլ կերպով մի
 և բոլոր գրուածն այլայլեալ, բայց ոչ խան-
 գարեալ: Վասն զի, ձեռագրին ընդօրինա-
 կողն՝ այսպէս կ'աւարտէ. « Հօս վերջանայ
 » պատմութեանս հեղինակին գործն, զոր՝
 » անկարելի էր իրեն ամբողջացնել, երկրիս
 » երեսաց ընդարձակութեանն համար՝ ընդ
 » արեւելս և ընդ արեւմուտս. սակայն այն-
 » չափ նիւթ հաւաքած է՝ որչափ ոչ դք իրմէ
 » զատ, և մեծ խնամքով ըրած է գործը.
 » միանգամայն և համառօտ է ի բացատրու-
 » թեան, վասն զի աւելորդ համարած է ճո-
 » խաբանել ի պատմութեանս. Իսկ խեղճ,
 » թշուառ և տկար գերիս՝ ընդօրինակողս,

» ինչ որ գտայ՝ դայն օրինակեցի, առանց ա-
 » լելցնելու կամ պակսեցնելու, (բայց վերջը
 » կ'ըսէ թէ համառօտեր է), առաջնորդու-
 » թեամբ Շէյխ Ար-Րայիս ալ-Աբբամ Ա-
 » պուֆարաճի, որդւոյ Շէյխ Ռափայելի,
 » որդւոյ Ապուլ Ֆարապի քահանայի Սան-
 » դուք ալ-Իլմ (Գիտութեանց սնտուկ) ա-
 » նուանելոյ, որ Մարայ Աշ-Համ դղեկի ե-
 » կեղեցւոյ քահանայից աւագերէցն էր...
 » Ընդօրինակութիւն զրոցս աւարտեցաւ չո-
 » բք շարթի օր Բառնա ամոյ երկուքին,
 » անբիժ Մարտիրոսաց 1054 թուականին,
 » որ է 738 », (հիճրէդի, և 1338 թուին
 Քրիստոսի): — Այս վկայութեամբ այլ հաս-
 տատուի որ գիրքը պահողքն, ընդօրինակողն
 և հեղինակն այլ քրիստոնեայ էին, զուցէ և
 ամենքն այլ քահանայ. Աբուսահլ եւս Շէյխ
 կոչուի: Յետոյ խոստովանի ընդօրինակողն
 որ կարեւոր բան մի դուրս չէ թողած ի հե-
 ղինակէն:

Աբուսահլի պատմածներն շատ ճիշդ և
 ստոյգ են, նա և ժամանակագրական և տե-
 զագրական մասամբք, միայն թէ շատ տեղ
 ոճով կարգ մի չունի գիրքն. ետեւ առաջ գրէ
 պատմելիքը. վանքի կամ եկեղեցւոյ մի վրայ
 գրելէն՝ կ'անցնի Եգիպտոսի եկամլտից կամ

Ներդոս գետոյն ստորագրութեան, կամ նշանաւոր անձի մի վարուց. շատ հեղ այլ կրկնէ առաջուան ըսածը, կամ մէկ մասն առաջ պատմէ, միւսը շատ ետեւ: Այլ ինչ և է, շատ հետաքննական և հարուստ գիտելիք ունի՝ Ղփտեաց ճգնաւորաց, վանորէից, եկեղեցեաց, պատրիարքաց, նա եւ մասամբ Նուբիոյ և Եթովպիոյ վրայ, ուր և թուի անձամբ գնացած և տեսած. աւելի առաջ այլ անցնելով՝ Ափրիկէի հիւսիսային կողմանց և Արաբիոյ, և ինչուան ի Հնդկաստան կ'ակնարկէ: Երբեմն եւս քաղաքական դիպուածոց վրայօք, որոց ներկայ եղած է, ինչպէս Սալահէտտինի Եգիպտոսի տիրելուն և աւերածներուն. երկայն գրուած մ'այլ Մարկոս Ալ-Քանպար անուամբ դիտի քահանայի և կրօնաւորի վրայ, որ իբրեւ քաղկեդոնական՝ հաճոյ չէ իրեն, և այլանդակ մուրութիւններ այլ ընծայէ անոր:

Աբուսահլ հնագոյն տեղեկութիւններն առած է իրմէ առաջ գրողներէն, որոց մէջ ա՛մենէն անուանի և գտնելը փափագելին է՝ Առուլ-Հասան Շարուշի անուամբ մէկն (*Ash-Shabrushti*, شبروش), ի դարու վերջ կամ ի սկիզբն ժ.Ա. ին մեռած. որ գրեր է Վաւորէից անուամբ գիրք մի (Քիրսայ ալ-Տիարար): Շատ բան այլ առած է թ. դարու հեղինակ

Սեւերոս եպիսկոպոսի գրած Աղեքսանդրիոյ կամ Յակոբկաց պատրիարքաց պատմութենէն, ուսկից նոր հեղինակք այլ շատ օգտուած են, բայց ամբողջ գործն դեռ չէ թարգմանուած յեւրոպական լեզուս: Ուրիշ աղբիւր մ'այլ է Եւտիքիոս անուանեալ՝ բայց բնիկ ա՛նուամբ Սայիտ իպն էլ-Պատրիկ պատրիարքն Մելքիդաց, + յամի 940: Այսոր գրածն թարգմանուած է լատինարէն և տպագրուած յՕքսֆըրտ, յամի 1654-6: Պարձեալ նոյնպէս եկեղեցական պատմիչ մի՝ Մանպուզ, Յակոբիկ եպիսկոպոս Մըմբեճացի:

Աբուսահլ ի պատմութեան՝ Մարտիրոսաց կոչուած թուականը գործածէ, որ կու սկսի Գիովլետիանոսի հալածանաց հրովարտակէն, ի 29 օգոստոսի 284 փրկչական տարւոյ. երբեմն այլ հիւճրէղի թուականը յիշէ: Հմուտ է մահմէտական օրինաց և պատմութեանց, և ոչ շատ խորշող. երկար գրելով և իբր բուն նպատակ՝ Ղփտեաց եկեղեցիքն և վանորայքը՝ աւելի յարեալ կ'երեւի այս ազգի, իբր համակրօն, և անոնց մէջ ծնած և սնած. թէ և հաւանօրէն՝ քանի մի դարէ ի վեր յԵգիպտոս գաղթած Հայոց սերունդ է. թուի թէ և մեր նոր գաղթականաց նման՝ բնիկ հայրենի լեզուին անգէտ կամ ոչ շատգէտ, արարերէն

գրեր է, իբրև գիտնական լեզուաւ, որոյ հըմ տութիւնն անտարակոյս է, նա և շատ պատմիչներ յիշելէն: Բաց ի սկզբան բաւական երկար Հայոց վրայօք գրածէն, այլ եւ այլ տեղ այլ յիշէ զնոյն Հայ պաշտօնեայս և Վզրուկս. և ուր որ Հայոց եկեղեցի և վանք կայ (գորս մենք այլ թարգմանօրէն պիտի յիշեմք), բայց ամենեւին իր հայազգի ըլլալը կամ ազգասիրութիւն՝ չի ցուցըներ. և ընդհանրապէս ոչ միայն անկողմնատէր, այլ և ցուրտ կ'երեւի, թէ և հաւատարիմ ի պատմութեան:

Այս մեր յառաջաբանս մասամբ առած ենք թարգմանչին եօթ կամ ութ թուղթ յառաջաբանութենէն, (որուն հաւատարմութեանը կամ արարագիտութեան չափին չէմք կըրնար երաշխարուր ըլլալ). մասամբ ամբողջ Աբուսահլի գրոց թարգմանութիւնը կարդալով. ուսկից և պիտի քաղեմք այն կտորները միայն որ վերաբերին Հայոց, և թարգմանութեան ներքեւ կ'աւելցընեմք երբեմն թարգմանչին և իր օգնականաց տուած ծանօթութիւնները, երբեմն մեր կողմանէ ինչ որ հարկաւոր համարիմք: Յիշեմք և զայս, որ թարգմանչին խընամով երեք չորս ցանկ շինած և գրած է ի վերջ թարգմանութեանն, յատուկ անուանց

տեղեաց և անձանց, և ընդհանուր անուանց, որ փափագելի էր մեզ աւելի ճոխ ըլլալ. աւսոնցմէ զատ և առաջին ցանկ մ'այլ ըրած՝ և համրած է եզրպտական եկեղեցեաց, թուով 707, և վանորէից՝ 181. բայց ասոնց վրայ կըրնար քանի մ'այլ աւելցընել¹: Յիշեմք դարձեալ, որ յետ պատմագրութեան Աբուսահլի կայ Յաւելուած՝ թարգմանուած Ալ-Մաքրիզի պատմչին (+1441) գրած Եզրպտոսի քրիտտոնէից եկեղեցեաց, 72 տեղեաց, և 86 վանորէից համառօտ ստորագրութիւն²:

Յետ զասոնք յիշելու՝ չեմք կըրնար շիշել խոր զգացմամբ՝ մեր նախնեաց յիշած և յանուանէ նշանակած եօթանասունէն աւելի Հայոց վանքերը յԵրուսաղէմ և ի մերձաւոր տեղիս, զատ յեզրպտականաց, Լուսաւորչի օրերէն մինչև ի վերջ Զ դարու՝ շինուած, բնակուած, նորոգուած և աւրուած: Միթէ

1. Կուրբիոյ մէջ այլ 400 եկեղեցիք կային, կ'ըսէ Աբուսահլ. Ժ.Ձ դարու ճարտուրդ մի տեսողի վկայութեամբ գրած է, թէ 130 եկեղեցի կային դեռ վայելուչք բայց աւերակք:

2. Միանգամայն թարգմանութիւն գրոց Աբուսահլի ծանօթութեամբք, Յաւելուածով, ցանկերով և յառաջաբանութեամբ 400էն քիչ մ'այլ աւելի երես է, քառածալ թերթերով. արաբերէն բնագիրն այլ 142 երես:

զուտ ազգային հեղինակ մ'այլ՝ Աբուսահլի և Շարուշթի նման չէր գրած չափաորապէս (և աւելի քան զԱնաստաս վարդապետ մեր յ'է դարու¹) ասոնց պատմութիւնը. կամ պիտի ըլլայ մէկ մի՝ որ հետաքննէ անոնց անհետացեալ տեղուանքը, և յերեւան հանէ անակնկալ և ոչ իսպառ անյուսարի նշխարքը, արձանագրերն, և այլ ի՞նչ գիտեմ:

Բ.

Յառաջարանի մէջ յիշուեցաւ այս պատմութեան ձեռագրին սկզբան պակասութիւնը. հիմնական եղածին առաջին երեսն այլ քիչ մի մաշած և դժուար կարդալի է. ասկէց թուի սխալ թուական կամ քանի մի բառ պակաս, որով շփոթի ըսածն. որ է այսպէս:

« Սկսինք օգնութեամբ և առաջնորդու
» թեամբ Աստուծոյ: Մեր ժամանակիս, այս
» ինքն ի սկըզբան 564 տարւոյ (հիճր. որ է
» հոկտ. 1168—1169 սեպտ. թուին Քրիստ
» տոսի), եղաւ վերաշինութիւն Ս. Յակովբ

1. Բազմավեպ, Հատ. Խ. Էջ 25:

» կոչուած եկեղեցւոյն, (Հայոց) որ Եզրպ-
» տոսի Այդեստան կոչուած վիճակին մէջն է,
» բլրոց մօտ »:

Բնագիրն՝ Ալ-Պասադիէ *الپاساڟيڟي* յոգնակի գրէ՝ ուրիշ տեղ Ալ-Պուսպան ըսածը, որ է այգի, պարտէզ, պահէզ, և Քահիրէ մայրաքաղաքէն քանի մի մղոն միայն հեռու է՝ յարեւելեան հարաւային կողմն: Տեղն ստոյգ, ըսած թուականն կամ վերաշինութիւնն սըխալ. վասն զի ի յիշեալ թուականին՝ վանքն ոչ թէ շինուեցաւ՝ այլ արուեցաւ կամ աւմայացաւ, ինչպէս քիչ մի վերջը պիտի ըտէ ինքն պատմիչն. ապա թուի թէ այս տեղ աւրուիլը յիշելով մէկ բառիւ՝ առաջին շինութիւնն այլ ուզեր էր յիշել, և երկու գիւպուածն յիրար խառնուեր է:

« Այս եղաւ... Էմիրին տտեն, որ կա
» ռավարէր զԵզրպտոս, շնորհիւ սուլտանին.
» և բարեկամ էր ամէն քրիստոնէից, թէ
» մեծամեծաց թէ ռամկաց:

Անուն էմիրին պակսի ի ձեռագրին, բայց յետոյ յիշածէն յայտնուի, որ Մուսղանգիր խալիֆէի՝ հայազգի վզրուկն էր, Պատր ալճամալի կոչուած, և շատ անգամ Էմիր ալճիյի² *امير الجيوش بدو*, այսինքն՝ զօրա-


պետ. յիշուի նա և ուրիշ պատուոյ անուամբք: Սա իբր դար մի յառաջ քան զվերոյիշեալ թուականն, այսինքն ՃԱ դարու վերջին քառորդին, Հայոց նոր գաղթական բերելով բազմացուց յԵգիպտոս զհամազգիս՝ իբրև 30,000 տուն. գոնէ 10,000, ինչպէս գրէ Ն. Շնորհալուոյ հմուտ կենսագիրն. ասոնց յատուկ եպիսկոպոս այլ ձեռնադրեց մեծ կաթողիկոսն Գրիգոր Վկայասէր, անձամբ գալով յԵգիպտոս, ինչպէս պիտի վկայէ և մեր պատմիչն: Պատրի ինչ ցեղէ ըլլալն յայտնի չէ, միայն կ'ըսուի թէ, Ասորոց երկրէն եկած էր կամ բերուած իբր գերի:

« Ինքն (էմիրն) ամսական տասն դենար » (ոսկի դահեկան) կ'առնուր վարձ երկրի (վաճանացն Հայոց), որ իր կալուածն էր: Չեոք զարկաւ և յառաջ տարաւ զվերաշինութիւն Ս. Յակովբայ սրբարանին (արաբ. ليكسا) սաքինա, ի յոյն ἄνεστησι բասէ). բարձր զբլ՝ բեթով՝ որ շատ հեռուէն կ'երեւէր, կամարօք և կամարակապօք. և աւարտեց բոլորը, նորէն հաստատելով մեծամեծ դռները. ասոնք ատեն մի վերցունցան, բայց ինքն նորէն նորոգեց. դարձեալ վերուցին այդ գրաւները, ինքն այլ դարձեալ հաստատեց »:

Հաւանօրէն՝ քրիստոնէից և մանաւանդ Հայոց՝ այն ատենի և տեղւոյ յառաջագիմութեան նախանձառք և հակառակողք կ'ընէին զայս:

Այս զիպուածոց մանրամասնութենէն աւելի՝ փափազելի էր մեզ գիտնալ, թէ երբ առաջին անգամ շինուեր կամ հիմնուեր էր՝ այդ Երուսաղեմի զուգորդ Հայոց եգիպտական Ս. Յակովբն. որովհետեւ պատմիչն՝ վերաշինութիւն կամ նորոգութիւն կոչէ Լւմիրին ըրածը. որոյ գործակից եղած է և Գրիգոր մեծ Վկայասէրն. ինչպէս վկայէ և պատմիչն Վարդան, թէ երբ եկաւ « ի Մար, և մեծա »
 « րեցաւ յոյժ ի սուլտանէն, և շինեաց » վանս Հայոց, և ձեռնադրեաց զեղբորորդի » իւր Գրիգորէս՝ եպիսկոպոս ». սա ըստ այլոց և ստուգիւ՝ քետորդի իւր էր: Վկայասիրի առաջին անգամ յԵգիպտոս գալուն թուականն հասարակօրէն համարուի 1076. թէ և ըստ Վարդանայ թերեւս աւելի կանուխ. զի հազիւ տարի մի նստած յաթոն (1065-6) « զնաց, կ'ըսէ, ի Կ. պոլիս, ի թարգմանութիւն. և առեալ զգրեանն՝ կամեցաւ զնալ » յԵրուսաղէմ. և նաւին առեալ զնա (վաճանացն հողմոյն) տանի ի Մար »: Վանաց շինութեանն անտարակոյս ձեռնտու եղած է Պատր, որոյ արդէն յամի 1074 վզրուկ ըլ-

389
39



լաւն յիշուի: Սա բաց այդ մեծ Ս. Յակովբ եկեղեցիէն,

« Աւարտեց զնորոգութիւն (ուրիշ մօտիկ)
 » եկեղեցւոյ մի, բայց օծել չտուաւ, և ոչ պաշ-
 » սօն կատարել հօն: Երբ վախճանեցաւ ինքն՝
 » թաղուեցաւ այս եկեղեցւոյ մէջ: Հիմայ այս
 » վանացս չորս կողմն են պարտէզք, բանջա-
 » րանոցք և արտորայք ցորենոյ. զբօսանքի
 » տեղեաց ամենէն նշանաւորն երէն մէկն
 » է: — Երբոր Ղուզք (ցեղակիցք Թուրքաց)
 » և Քուրդք տիրեցին Եգիպտոսի երկրին
 » հիճր. 564 (1168-9 Փրկչին), ամենուն ծա-
 » նօթ տաղնապք եկան այն տան յԵգիպ-
 » տոս բնակող Հայոց վրայ. իրենց պատ-
 » ըրիարքն և կրօնաւորք՝ մեր յիշեալ վանքէն
 » վաճնտուեցան, դռներն պատեցան զոցուե-
 » ցան, և ոչ ոք համարձակէր մօտենալու ա-
 » մայացեալ եկեղեցիներուն »:

Եգիպտոսի տիրոզն էր հռչակաւոր Սալահ-
 էտտինն՝ Հալպայ և Գամսակոսի Նուրէա-
 տին սուլտանին հրամանաւ. և զի ազգաւ
 Քուրդ էր նա, Արուսահլ անոր զօրքերն այլ
 Քուրդ կոչէ, որոց զինակից էին և Ղուզք
 կամ Ղոզք: Իսկ թուականն՝ որ ստոյգ է և
 նոյն իր պատմութեան սկզբան յիշածին հետ,
 յայտնէ մեր վերը ըսած շփոթութիւնը՝ ե-

կեղեցւոյ շինութեանն և ամայութեան:

Այս ատենի Հայոց եպիսկոպոսին՝ զոր նա
 պատրիարք կոչէ, յայտնի չէ անունն. անկէ
 առաջ մեզ ծանօթ եպիսկոպոսն է Անանիա,
 30 տարի մ՛առաջ վախճանած:

« Այգեստանն ի կալուած արուեցաւ Ֆաքի
 » ալ-Պահա Ալի անուն դամասկացւոյ (գիտ-
 » նական անձ մի). սա Հայոց համար շնորհեց
 » Յովհ. Մկրտչի եկեղեցին, որ շինուած էր
 » ամբիծ Տիրամօր եկեղեցւոյն վրայ, ի Հա-
 » րա-Չաւիլա (Թաղի). հօն բնակեցաւ պատ-
 » ըրիարքն՝ նոյն տարին (1168-9) »:

Յիշեալ թաղն՝ որ հիմայ Զուվայիլա կ'ը-
 սուի, կոչուած է յանուն Քարբարոս (Պէր-
 պէր) ցեղի կամ գնդի, որ շիներ էր զայն, Գա-
 հիրէ մայրաքաղաքի շինութեան ատեն, իբր
 յամի 969. ինչուան հիմայ կայ այն տեղ յայտնի
 հնութեան նշաններով եկեղեցի մի յանուն Ս.
 Կուսին (Ալ-Ատհրա), և հաւանօրէն նոյն
 պատմչին յիշածն է: Իսկ վրայէ վրայ շինուած
 եկեղեցիք շատ յիշուին և կան յԵգիպտոս:

Որչափ այլ Հայք Եգիպտոսի տէրութեան
 փոփոխութեան ատեն վնասուեցան և քուե-
 ցան, բոլորովին այլ անգործ և ապշած չեն
 կեցած. Ֆուստատայ (Հին Գահիրէի) մէջ Տի-




բամօր նուիրեալ եկեղեցի մի կար, շատ յա-
ճախեալ ի բարեպաշտից. այդ քաղաքական
շփոթից ատեն՝ եզիպտական զօրաց մէկ բա-
ժինն՝ ձիւյիւշիէ կոչուած՝ որ Խափշիկ էր ազ-
գաւ և հակառակ միւս (Ռայհանիէ) բաժնին,
կողոպտեց այս եկեղեցին, և ինչուան ճամ-
բաներու վրայ այլ աւազակութիւն և մար-
դասպանութիւն կ'ընէր, ինչպէս պատմէ Ա-
բուսահը, և աւելցընէ.

« Երբ Ղուզք և Քուրդք տիրեցին Եգիպ-
» տոսի (1169ին), զունդ մի քրիստոնեայ
» Հայոց՝ վրայ հասան այս Սեւերուն, և շա-
» տերը սպաննելով՝ մնացեալները վարնտե-
» ցին. և անոնց բնակած թաղն որ մօտ էր
» Ալ-Համրայ (Թաղի) անբնակ մնալով՝ Հա-
» տալպա Ղուզի մականուանեալ Գահիրէի
» վալին գնեց, և մշակութեան երկիր դար-
» ձուց տեղը », և այլն :

Յատուկ Հայոց զօրագունդ մ'ըլլալն ի բա-
նակի խալիֆայիցն Եգիպտոսի, յիշեն ուրիշ
պատմիչք այլ, նա և իրենց բնակութեան
Թաղը, Հիւսէյինիէ կոչուած :

Գ.

« Հայոց Պատրիարքն. — Սյս պատ-
» ըրարքս նախ եպիսկոպոս էր Իթֆիհի (որ
» հիմայ Աթֆիհ,  կոչուի, և փոքր քաղաք
» մ'է ի հարաւակողմն Գահիրէի, իբր 2800
» բնակչօք). յետոյ Ալ-Հաֆիդի խալիֆայու-
» թեան ատեն՝ (1130-49) մտածեց պատ-
» ըրարք ըլլալ, կաշառք տալով: Գաշինք զը-
» բաւ ամիրապետին հետ, անոր պատմական
» գիտութիւններ հազորդելու, և սա՛ հաճե-
» լով թոյլ տալու անոր՝ որ շարաթն երկու
» անգամ՝ երկուշարթի և հինգշարթի, զայ ի
» պալատ, էմիրներու և պաշտօնէից հետ,
» նա և սօնական օրեր, զինքը բարեւելու,
» և նոր գտած տեղեկութիւնները տալու:
» Սյս կերպով երբ պատրիարքն այցելութեան
» գար ի Զմրխտեայ պալատն, կու հազորդէր
» ինչ որ գտեր էր ի կենսագրութիւնս, ի պատ-
» մութիւնս պատերազմաց, ի ժամանակա-
» գրութիւնս և ի տարէգիրս առաջին տիրա-
» պետաց. և այս կերպով զրուցակից կ'ըլլար

» Աւ-Հաֆիզի հետ, ինչուան ասոր մահը, որ
 » հանդիպեցաւ երկրորդ Ճումահա ամսոյն 544
 » տարւոյ » (հիճր. որ է Փրկչին 1149):

Յիշեալ Չմրըխտայ պալատն (Գասր ալ-
 զիւմրիւտ, قصر الجمر) ֆաթիմեան խալի-
 ֆայից արքունական մեծ ապարանից մասն
 էր, յարեւելեան կողմ Գահիրէի, քաղքին
 Չմրուխտ կոչուած դըրան անուամբ: Յիշելի
 է այս տեղ որ նոյն տարիները (1135-7) խա-
 լիֆային վերուկն էր Պահլաւունին Վահրամ,
 որ յետոյ պիտի յիշուի:

« Վերոյիշեալ վանքէն դուրս՝ բայց ոչ հեռի,
 » բրտարանէն (հօղէ ամաններու գործարան)
 » զատ փոքր եկեղեցի մի կար, Աւ-ամիր պի-
 » Ահքամիլլահ խալիֆային ատեն շինուած
 » (որ է նախորդ Հաֆըզի), ի պէտս Մելքի-
 » տաց, փոխանակ Հարա Զաւիլայի մէջ եւ
 » դած եկեղեցւոյն, որ և աւրուած էր անոր
 » ատեն, և Հաֆըզի ատեն ի մզկիթ փո-
 » խուեցաւ: . . . Վամարներու վրայ շինուած էր
 » եկեղեցին. ներքեւն այլ մեռելոց համար
 » գերեզմանատուն մի կար: Երբ Ղօղբ և
 » Քուրդք Հայոց վրայ հարուած բերին, պատ-
 » ըրիարքնին թողուց զԵգիպտոս և ելաւ գնաց
 » յԵրուսաղէմ. հետը տանելով 75 Սուրբ

» Գիրք, որոց մէջ կար և օրինակ մի չորից
 » Աւետարանաց պէսպէս գոյներով և ոսկւով՝
 » պայծառազարդ պատկերօք հրաշագործու-
 » թեանց Քրիստոսի, որ փառաւորեալ ըլլայ »:
 Բանասիրաց ցանկալի և անակնկալ մար-
 մալ մ'է այս ձեռագրացս յիշատակն, ոչ այն-
 քան թուովն՝ որքան անոնց ընտիր և պատուա-
 կան ըլլալովն, մանաւանդ այն ընտրելագոյն
 Աւետարանն, որ թուի թէ և հնագոյն էր:
 Այսպէս կարծելով և թարգմանիչ գրոցս՝ հա-
 մարի թէ յոյն կամ ասորի ճարտարաց գործ
 ըլլան զարդերն. վասն զի, կ'ըսէ, ԺԳ. դարէն
 առաջ Հայոց մէջ այսպիսի մանրանկար չկար:
 Սակայն ԺԻ դարու վերջերն այլ ի Հայոց
 ոսկեզարդ և գունագոյն նկարեալ Աւետա-
 րանք գտուին հիմայ. (օրինակ մի ըլլայ Սի-
 սուանի երես 84 պատկերն, Ս. Ներսիսի Լամ-
 բրունեցոյ Աւետարանին): Թարգմանիչն յիշէ
 Էջմիածնի 989 թուին (Քրիստոսի) գրուածը,
 որոյ պատկերք յերաւի հնագոյն ասորի նկարք
 են. յիշէ նա և մեր Ս. Ղազարու վանաց
 աւետարան մի՝ բիւզանդական մանրանկարք՝
 ի վերջ Ժ դարու. ստուգիւ չունիմք մենք
 այդպիսի մի որոշ թուականաւ, բայց հատ
 մի՝ ոչ շատ մանր և ոչ այլ խոշոր արուեստով՝
 բայց նշանաւոր պատկերօք և քիչ ոսկւով, որ

ըստ ոմանց ԺԱ դարու գործ է, և ըստ այլոց՝ հնագոյն: Մնայ մեր Երուսաղեմի հուշակաւոր Ս. Յակոբայ միաբանինց՝ քննել թէ արդեօք դեռ գտուի՞ իրենց զբառան կամ գանձատան մէջ՝ Արուսազի յիշած Աւետարանն, որոյ ինքն տկանատես եղած և հաւնած գուշակուի. և մեզ հաւանական թուի թէ Գր. Վկայատէր բերած էր գայն. վասն զի յիշուած է ի պատմչաց մերոց հետը ձեռագիրներ բերելն և թողուլն յԵգիպտոս:

« Պատրիարքին ճամբորդութիւնն սկսաւ » շաբաթ օր Հատուր ամսոյ 15ին (նոյեմբ).
 « Մարտիրոսաց 888 թուին (1172 Քրիստոսի),
 « որ համեմատի հիճր. 568 տարւոյ Ռապէ
 « էփփէլ ամսոյ 23ին: Կ'ըսուի, թէ Երուսա-
 « ղեմէն դուրս վանք մի շինեց, եկեղեցի մ'այլ
 « յանուն Ս. Սարգսի, سارگيس, որ է նոյն Ա-
 « պու Սիրճա ܣܘܪܨܐ կոչուածն. և այս ե-
 « կեղեցւոյս փոխադրեց բոլոր սեղանոյ սպաս-
 « քըն և ոսկի դահեկանքն. կ'ըսուի այլ թէ
 « 20 միանձունք կային այս վանաց մէջ »:

Կարծեմ այն Ս. Սարգիս եկեղեցին հիմայ անյայտ է, և յիշուած չէ մեր Երուսաղեմի Ս. տեղեաց ստորագրողներէն:

« Պատրիարքն իրեն փոխանորդ քահանայ
 » մի թողուց ի Քահիլիէ, անոր օրդւոյն հետ,
 » որ ժամասացութիւն և պատարագ կատա-
 » րեն ըստ պատշաճ ժամանակի, Յովհ. Մկլըր-
 » տիչի եկեղեցւոյն մէջ, որ ի Հարա Զաւիւա՝
 » անարատ Տիրամօր մատրան (եկեղեցւոյ)
 » վրայ շինուած է, ինչպէս առաջ լաինք.
 » այս եկեղեցւոյ մէջ ժողովէին ընկերութիւն
 » մի Հայոց՝ արանց և կանանց: Իսկ ասոնց
 » ունեցած վանքն եկեղեցիներով մէկտեղ՝ ա-
 » մայի թողուցան, և դռներն այլ փակուե-
 » ցան: — Երբ լուր եղաւ որ պատրիարքն
 » յԵրուսաղէմ եկաւ հասաւ անվտանգ, բու-
 » լոր քրիստոնեայք ընդ առաջ գնացին իրեն
 » ուրախութեամբ և խնդութեամբ, հանդերձ
 » սաղմոսերգութեամբ, և առջևնէն խաչեր և
 » վառած-ջահեր տանելով և բուրվառներով
 » խնկելով: — Ասկէ վերջը պատրիարքն
 » հանգիստ ապրեցաւ քիչ մ'ատեն, և ապա
 » հանգեաւ ի շնորհո Սատուձոյ, որ գովեալ
 » ըլլայ, Տուրի ամսոյ հինգին (որ համեմատի
 » դեկտ. 27-յանու. 25), ի նոյն վերոյ/չեալ
 » տարին, և թաղուցեալ ի վանս Ս. Յակով-
 » բայ Զերեղեան յԵրուսաղէմ: — Սա աղ-
 » նուաբարոյ անձ մի էր, գեղեցիկ տեսքով,
 » վայելուչ հասակաւ. երեսքն մօրուօք և մը-

» ուղարկ պատած, որ ալեւորած էին, և տա-
 » րօքն այլ իբրեւ ութսունամեայ էր »:

Այս նկարագիրս անտարակոյս յայտնէ որ
 Աբուսահլ անձամբ տեսեր և ճանչցեր է իր
 պատրիարք կոչածը. ախոս, որ անունը չէ
 գրած, կամ թէ կամաւ լուած է, ինչպէս և
 անոր ժամանակակից և ազգակից Երուսա-
 ղէմի եպիսկոպոսին անունը, որոց վրայ ը-
 սուած պժգալի զրպարտութիւններ յիշէ, վը-
 կայելով այլ որ նախանձոտաց չարախօսու-
 թիւն ըլլան և անստոյգ:

« Կ'ըսուի, թէ յԵրուսաղէմ նստող Հայ ե-
 » պիսկոպոսն՝ տեսնելով որ ամենքն կ'երթան
 » տեսնուելու այս սուրբ պատրիարքին հետ,
 » իր ազնուական բարուց համար, նախան-
 » ձելով վրան՝ թոյն խմցուց, և մահը պատ-
 » ճառեց: Բայց Աստուած յաջողութիւն շտուաւ
 » այդ եպիսկոպոսին՝ պատրիարքին մեռնելէն
 » վերջը, և ոչ երջանիկ կեանք. վասն զի
 » քսան օրէն ետեւ ինքն այլ մեռաւ: Աս-
 » տուած իր ծածուկ իմաստութեամբ գիտէ
 » թէ որչափ ստոյգ էր այդ եպիսկոպոսին
 » համար ըսուածն: Իսկ պատրիարքն՝ որոյ
 » համար էր խօսքերնիս, գիտուն քահանայ
 » մ'էր, լաւ տեղեակ Ս. Գրոց և զանոնք

» յաջող բացատրող: Բայց կային նախանձօտք
 » իր բարի համբաւոյն տարածմանն համար,
 » և կ'ըսէին թէ յանցաւոր եղած էր ոչ բա-
 » րոյական վարքով: Այս զրոյցս հանեցին ի-
 » րեն անմեղութեան ամենէն աւելի նախան-
 » ձօտքն: Գրոցս հեղինակն (ինքն Աբուսահլ)
 » վկայէ, թէ հանդիպեցաւ Ասկաւոնացի Ա-
 » պու'ը Գասիմ Խալիլ փիլիսոփայ բժշկի, որ
 » կ'ըսէր, թէ տեսեր էր զպատրիարքը՝ Ազ-
 » Ձուհրի վանքում եղած ատեն, իր խըցիան
 » մէջ (և անարատ գտեր է): Այս զրոյցս իր
 » յԱսորիս (Եգիպտոսէ յԵրուսաղէմ) երթա-
 » լէն և իր մահուանէն վերջը տարածուե-
 » ցաւ: Մտայ զատիներուն գլխաւորին (որ
 » էր Ալ-Ազզ Հասան իսն Սալամա՝ Պատի-
 » լանի մականուանելոյ) տանը մէջ՝ ես այս
 » զրոց խեղճ հեղինակս՝ հանդիպեցայ (վե-
 » րոյիչեալ) Ապու'ը Գասիմի, Շափլալ ամսոյ
 » 27ին, յամին 568 » . (Հիճր. Իսկ Քրիստոսի
 1173):

Այնքան այլանդակ են զրոյցքն, որ և ոչ
 թարգմանել արժան համարուած են. և գրեթէ
 նախանձօւ կիրքն՝ ինք զինքը յայտնէ, փոխա-
 նակ ուրիշներու ըրածին, Հրէշ պիտի ըլլար
 եպիսկոպոսն՝ որ 80ամեայ ծեր պատրիարքի
 մի թոյն տայ, որոյ համբաւն, գիտութիւն,

կրօնասիրութիւնն՝ իրեն իսկական ջատագով են: Քայց Աստուծոյ գիտութեան թողով՝ ԱրուսաՀլի հետ՝ եթէ դատելու բարոյական բան մ'այլ կար, պատմականը կըրնանք խընդրել, այլ գուցէ և չգտնել. այսինքն, այդ եպիսկոպոսին ս՛վ ըլլալը և անուը: Յառաջ քան Երուսաղեմի պատրիարքներն, այսինքն Փ.Պ. դարէն յառաջ եղած եպիսկոպոսաց կարգն և անուանքն՝ շատ ստոյգ չեն, թէ և մօտ ատեններս՝ Ս. Յակովբայ հօշակաւոր աթոռոյն յաջորդներուն վրայ գրողք՝ շարակարգ մի հրատարակած են. ըստ որոց՝ վերոյիշեալ դիպաց տարին, 1172-3, Սահակ էր եպիսկոպոսն, այն որ Հռոմկալի ազգային եկեղեցական մեծ ժողովոյն մէջ կու ստորագրէ, « Սահակ արքեպիսկոպոս աստուածա » կոխ քաղաքին Երուսաղեմի ». և կ'ըսեն, թէ սա աթոռակալեր է 1152 թուականէն մինչև ի 1180: Քայց ժողովոյ պատմութիւնն և ժամանակակից ԱրուսաՀլի պատմածն՝ անտարակոյս կ'ընէ, որ այս Սահակս չէր այն տարուան (1173) եղած և մեռած եպիսկոպոսն. անկէց առաջ՝ նոր գաւազանագիրք կու գնեն Եսայի եպիսկոպոս, յամի 1152, եղբայր իր նախորդ Ներսիսի, որ աթոռակալած ըլլայ յամի 1109. ուրեմն երկու եղբարք միանգա-

մայն 45 տարի, որ շատ հաւանական չերենար: Ինչպէս այլ ըլլայ այս, հարկ է որ Եսայեայ և Սակահայ միջեւ, 1152-1171, ուրիշ և եպիսկոպոս այլ եղած ըլլայ, և ինքն կամ իրեն անձանօթ յաջորդ մի ըլլայ նախանձաբեկ մեռնողն ի 1171: — Տեղական խնդրին, այսինքն Խալիլ Պասիմ բժշկին եկած և պատրիարքին բնակած Ազ-Չուհրի վանքն՝ զոր անմիջապէս այս դիպուածէն վերջը յատկապէս պիտի ստորագրէ ԱրուսաՀլ, ծանօթ և անուանի էր. ըստ թարգմանչացն՝ ընդ մէջ Պահիրէի և Ֆուստատայ, ուր նախայիշեալ այգեստանն կամ ընդարձակ պարտէզներն կային, իրենց առջի ստացողին անուամբ կոչուած, որ էր Աբդ ալ-Վահայ իպն Մուսա Ազ-Չուհրի:

Գ.

« Հայոց՝ Այգեստանի եւ Չուհրեայ մէջ » եղած Եկեղեցեաց՝ յետոյ ի՛նչ ըլլաին: —
 » Երբ և ոչ մէկ գլխաւոր Հայու մի թողաւ
 » ցին մնալ յԵգիպոսս, Ղփտիք ստացան
 » այս ընդարձակ և հին եկեղեցին, մեր տի-

» րով սուլտանի վճռով, և միջնորդութեամբ
 » Շէյխ ար-Ռայիս Սաֆի ատ-տաւլա իպն
 » ապու՝ Մաալի գպրի (կամ գրագրի), որ և
 » իպն Շարաֆի կոչուէր: Յետոյ Հայոց (համ-
 » բարապետն կամ պաշտօգանն) Վահրամ
 » Սայիտ ատ-տաւլա թխ, Ճ.ՍՍԱ Սայա
 » նորոգեց այս իրաց յարմարութիւնը »:

Յիշեալ սուլտանն՝ կամ Նուրէտտինն է
 կամ Սալահէտտին: Վահրամդ այդ իշխանա-
 ւոր՝ չէր այն Շնորհալուոյ հօրեղբօր որդի և
 եղբայր Պրիգորի եպիսկոպոսի մեծիշխան
 Վահրամն, որ յետոյ պիտի յիշուի ի պատմը-
 չէս, և որ այս պատմածին թուականէն 40
 կամ 50 տարի առաջ պայծառանար յԵգիպ-
 տոս. բայց գուցէ ասոնց ցեղէն ըլլայ. իսկ ա-
 սոր գործն կամ պաշտօն՝ զոր Աբուսահլ թխ,
 Հայոց կոչէ, և անգլ. թարգմանիչն steward
 of the Armenians գրէ, կարծեմ փակագծե-
 լոցս մէկը նշանակէ, և որ և է կերպով՝ գոր-
 ծակալ մի էր Հայոց: Իր ըրած գործն այլ
 (որ քիչ մի մտթ է) գրելէն ետեւ, պատ-
 միչն յիշէ եկեղեցւոյն նորոգութիւնն իպն-
 Շարաֆի ձեռօք և Աղեքսանդրիոյ պատրիար-
 քէն օծուիլը, և անոր աթոռանիստ ըլլալը,
 ուր տեղ Հարաթ-ար-Ռում (հոովմէաբնակ)
 թաղի Ս. Աստուածածնի եկեղեցիէն քահանայք

գպին պաշտօնը կատարելու. յիշէ և եկեղեց-
 ւոյն պատկերաց նկարողները, որոց ամենուն
 գործն աւարտեր է յամին 1177:

« Այս ատեններս եկաւ ի Հայոց եպիսկո-
 » պոս մի, հետն այլ երեք քահանայ, Հայոց
 » թագաւորէն և պատրիարքէն զրկուած.
 » երկուքէն այլ մէկ մէկ պատգամ, և երկու
 » այլ թուղթ բերելով. որոց մէկը գրած էր
 » Մէլիք Սալահատտին, միւսը՝ անոր եզ-
 » բայրն Մէլիք Սայֆատտին Ապուպէքր,
 » առ Մէլիք Թաքիատտին. որք պատուիրէին
 » այսոր՝ իրենց թղթերովը, պատուով ընդ-
 » ունիլ զեպիսկոպոսը. և Հայոց երկու ե-
 » կեղեցիները՝ որ յԱյգեստանն և ի Զուհ-
 » բի՝ դարձրնել տալ անոնց: Եպիսկոպոսն
 » իջաւ յեկեղեցի Ս. Յովհաննու Մկրտչի՝
 » որ ի Հարա - Զաւիլա. բայց Պաքիճ՝ ատ-
 » թուսի չհաւանեցաւ այս բանիս. եպիսկո-
 » պոսն այլ հակառակելով անոր գէմ՝ ամիս-
 » ներով կեցաւ հօն, մինչև հիւանդանալով
 » մեռաւ, առանց իր նպատակին հասնելու.
 » թաղուեցաւ Հայոց Զուհրի եկեղեցւոյն
 » մէջ. Աստուած ողորմի հոգւոյն »:

Պաքիճ՝ դամոսկացի մ'էր, Այգեստանին
 կալուածատէր: Մեզի նշանակելին է այդ ան-

ծանօթ մնացած դիպուածն, եպիսկոպոսի մի պատգամաւորութեան, ի քաղաքական և եկեղեցական զլիտոց Հայոց: Յետինն յայտ է ի ժամանակէն՝ որ էր ճարտար և փառաւոր կաթողիկոսն Գրիգոր Տղայ. առաջինը՝ թարգմանիչն կարծէ թէ մեր մեծագործ Ա. Լեւոնն ԸԼԼայ. այլ չէ. հապա իր եղբայրն է Պարոնաց Պարոնն Ռաբէն, որ վախով զիջած էր առ Սալահատին, առ որ և Գր. Տղայոյ զրած մէկ մտերմական թուղթն յիշուի, թէ և ստուգութիւնն երկբայական է. իսկ Լեւոն ինչպէս վարուեցաւ Սալահատինի հետ, ծանօթ է մեզ (ի Միսուան), որոյ պատմական մասին փռանկերէն թարգմանութեան՝ խաւրէ անզլիացի թարգմանիչն՝ զընթերցողը. (բայց ոչ համաձայն հայ հեղինակին): Սալահատինի և Սայֆատինի թուղթերն ընդունողն Ռաբիատտին՝ էր ետքինիս որդին, փոխարքայ զբուած յԵզիպոս՝ յամի 1183, ուսկի կանչուեցաւ յԱտորիս յամի 1186, ուրեմն այս երկու թուականաց միջոց եղաւ Հայոց եպիսկոպոսին գալն, որով և մեր Ռաբենի իշխանապետութեան ատեն, մինչ Լեւոն ոչ թէ միայն չէր թագաւորած՝ այլ և ոչ պայազատած: Այս դիպուածէն քիչ վերջը, պատմէ Արուստհլ՝ Վփտեաց գողութեան կասկած ու

նենալն՝ եկեղեցեաց պահապան մալիմանաց վրայ, և զանոնք ծեծելը. ասոնց այլ բողոքեին առ Յաբիհ, որ փակել կու տայ զեկեղեցիս. յետոյ սուլտանն հրովարտակաւ շորհէ բանալ և պաշտօն կատարել: Բայց Յաբիհի մեռնելէն ետեւ՝ նոր կալուածատէրն Պարոկաստանի Տուս (Tus) քաղքէն եկած իմամ մի,
 « Սկսաւ նեղել զքրիստոնեայս, և պար-
 » զեւներ պահանջել կաշառի կերպով, ին-
 » չուան ուր որ իր իշխանութիւնն հասնէր.
 » յետոյ այն երկու եկեղեցիներն այլ փակել
 » սուաւ, մեծին սպանները կողոպտելով, և
 » դրան արգելք դնելով խոշոր գերան մի. ին-
 » չուան հիճր. 581 (Քրիստոսի 1185) տար-
 » ւոյ Շապան ամսոյ 13ին, ուրբաթ օր: Այս
 » ատեն Հայ մի եկաւ, որ կ'ըսէր թէ բա-
 » ըկկամ էր թագատ-տաւալ (թագ պետու-
 » թեան մականունանեալ) Վահրամայ Հայոյ,
 » (Շնորհալոյ հօրեղբոր) որ Ալ-իմամ Հա-
 » ֆըզ (խալիֆայի) վզուրկն էր. և կ'ըսէր, թէ
 » այս վզըրկին ստակները թաղած էր մեծ
 » եկեղեցւոյն մէջ, և հիմայ եկած էր զանոնք
 » հանելու: Բայց իր ըսածին մտադրութիւն
 » չըրին. սակայն ինքն, կ'ըսուի, թէ այնքան
 » պնդեց իր երեւակայածը, որ եկեղեցին
 » բացին իրեն, և սկսաւ տեղ տեղ փորել:

» յետոյ ըսաւ. Ստական աներեւոյթ եղեր է
 » այս տեղէս. եկեղեցին կողոպտողներն ա-
 » ռած են. և սկսաւ գանգատիլ, թէ անի-
 » րաւութիւն մ'եղած է: Եկեղեցին իրեն
 » համար բաց մնաց, և քանի որ այս երե-
 » ւակայութեան մէջ էր, կեցաւ հօն. և երկ-
 » րորդ կնիք մ'այլ դրաւ Մէլիք ալ-Մու-
 » զաֆֆարի (վերոյիշեալ Թաքիատտին) գը-
 » րածին վրայ: Բայց նոր նորոգութիւն մի
 » չեղաւ հօն: Երբ Թաքիատտին յԱսորիս
 » գնաց, հիճր. 582 Շապան ամսուն (1186
 » Քր.) և եկաւ Ալ մէլիք ապու - Պէքր (Սա-
 » լահատտինի եղբայրն, իբրեւ խնամակալ
 » անոր որդւոյն), հրամայեց՝ որ այդ երկու
 » եկեղեցիները զատեն իրարմէ, նոյն տա-
 » րին՝ Ռամազանի 10ին, և Ղփտիք և Հայք
 » տիրացան եկեղեցեաց և սկսան գործածել,
 » յետ տարի մի և 15 օր գոց մնալու:
 » Ղփտիք մեծ եկեղեցւոյն մէջ պաշտօն կա-
 » տարէին, Քուհիաք (կամ Խոյաք ըստ Ղըփ-
 » տեաց) օրհնեալ ամոյ առաջին օր (նոյեմ-
 » դեկտ.), ամբիժ Մարտիրոսաց 903 թուին
 » (1187 Քր.). և անկէ ետեւ Ղփտիք թող
 » չտուին Հայոց՝ մեծ եկեղեցւոյն մէջ պաշ-
 » տել: Այս բանիս համար ժողովք ըրին
 » գլխաւոր անձինք. և երկու եկեղեցիքն այլ
 » նորէն Հայոց ստացուած եղան » :

Որքան ատեն մնացին եկեղեցիքն ի ձեռս
 Հայոց, ծանօթ չէ մեզ. գոնէ Աբուսահլի ա-
 տեն իրենք էին տէր. իր գրոց Յաւելուած
 և մեր յառաջարանի մէջ յիշուած Մաքրիզի՝
 երկար դրէ այս տեղւոյ յիշատակին. և թէ,
 վերը յիշուած դիպուածներէն դար մի վեր-
 ըը՝ Իպն Քալաուն Նասր սուլտանին՝ ջրա-
 գարձներ և լճակ մի շինել տուած ատեն՝
 այդ եկեղեցեաց չորս կողմը, ժողովուրդն
 ինքնօրէն աւերել փուլցեր կողոպտել է զա-
 նոնք և ուրիշ եկեղեցիներ այլ: Իսկ մեր
 պատմիչն՝ վերջի ըսածէն ետեւ, զանոնք այլ
 զՀայս այլ կու թողու, և կ'անցնի ուրիշ և
 ուրիշներուն եկեղեցեաց ստորագրութեան.
 զորս մենք այլ թողլով իրենց, մերայոց
 վերաբերեալ տեղիքն և մեծ պաշտօնեայքը
 յիշենք՝ իր ըսածներովը և ուրիշներու ծանօ-
 թութեամբք:

Ե.

« Տուրայի, طبر, վանք և եկեղեցին . —
 » Բրտի վանք بدیر الفخار անուանեալ վանքն՝
 » նուիրուած է Ս. Մերկիրիոսի. կ'ըսուի
 » թէ և յանուն Ս. Թէոդորոսի այլ կոչուած
 » է. կայ հօն և եկեղեցի մի յանուն փառա-
 » ւորեալ Ս. Գէորգեայ, Տուրայի վիճակին
 » մէջ, (Նեղոս) գետոյն (աջ) եզերքը, (Սա-
 » գեստանէն հազիւ երկու մղոն հեռի, ի հա-
 » րաւակողմն)։ Եկեղեցին փոքր էր քանի որ
 » յակորիկ Ղփտեաց ձեռքն էր. բայց երբ
 » Գրիգոր պատրիարքն (կաթողիկոսն) Հայոց
 » եկաւ յԵզիպտոս, և Հայք (իրենց ազգա-
 » կից վեզիր) Ամիր ալ-ճիւլիւշ Պատրի չորս
 » կողմ՝ ժողովեցան, Յակոբկաց Անպա
 » (Հայր) Կիւրեղ պատրիարքի ատեն, և Տու-
 » րայի վիճակն արուեցաւ Հայոց, ասոնք ա-
 » ոին զեկեղեցին և փլուցին, և անոր տեղ
 » մեծ ընդարձակ եկեղեցի մի շինեցին՝ շատ
 » գմբեթներով, և կոչեցին յանուն Ս. Գէոր-
 » ցայ. վրան այլ աշտարակ մի կանգնեցին
 » (երբ գանդակատուն), որոյ դուռն եկեղեց-

» ւոյն միջէն էր. եկեղեցւոյն չորս դին այլ
 » պատ քաղեցին. այն շրջապատին մէջ կար
 » աղբիւր մի և ջրաղացք մի եւս։ Եկեղեց-
 » ւոյն չորս կողմն այլ կար տեղ նարընջինի
 » ծառոց և երկու տաշայրէ, د و جرقن, որ
 » են պտղատու արմաւենիք, և ուրիշ ծա-
 » ւեր։ Երբոր Հայոց վրայ փորձանքներն
 » եկան, եկեղեցին նորէն դարձաւ Յակոբ-
 » կաց, Անպա Մարկոսի պատրիարքութեան
 » ատեն, որ առաջ կոչուէր Ապուլ Ֆարաճ
 » Իպն Զարահ, և էր ԶԳ ի յաջորգութեան
 » (պատրիարքաց Աղեքսանդրիոյ)։ . . . Ուրիշ
 » գրուածի մի մէջ կ'ըսուի, թէ Ս. Գէորգայ
 » վանքն ի ձեռք բերաւ Ապու Եասիր քա-
 » հանայն, աւելի ճանչցուած Իպն ալ-Քուա-
 » դալ անուամբ, և հանդիսապէս թաղուեցաւ
 » յամին 559 (Քրիստոսի 1164) ի Բաումա
 » ամայն, ի պատրիարքութեան Անպա Յով-
 » հաննու, հաւանութեամբ Հայոց։ Ապու
 » Եասիր՝ եկեղեցւոյն վերնայարկին վրայ ե-
 » կեղեցի մ'այլ շինեց յանուն Ս. Մինասայ,
 » և ուրիշ մ'այլ յանուն մեծի Ս. Յովհաննու
 » Մկրտչի և Գրիգորի. այս ետքի եկեղեցիս
 » կենդորոնական մեծ եկեղեցւոյն հարաւա-
 » կողմն էր, Հայոց վանաց մէջ ի Տուրա, և
 » օծուեցաւ ի10 Բաումա ամայ, յամի 902

» իրաւափառ Մարտիրոսաց (1181 Քրիստոսի) շինութեան ծախքը նախ վճարեց
 » Իպն Մաշքուր, ի ժամանակի օժմանն յԱպուստոլոսէ, որ և էր վերակացու շինութեան պարսպաց Քաշիրէի և Մարայ:
 » Այս վանաց մէջ կայ աշտարակ մի, աղօսարիք մի, և պարտեզ մի, որ Հայոց ստացուած էր. և երբ անոնցմէ ելաւ, Յակոբ թուականէն ետեւ
 » (Քրիստոսի 1204): Երբ Ապուստոլոս մեռաւ, վանքն եղաւ ստացուած իր աշակերտաց և Ղփտեաց, և այսպէս մնաց մինչեւ մեր ատեն »:

Այդ 1204 թուականէն ինչուան Աբուսահլի գրութեան ատեն, ինչպէս յառաջաբանիս մէջ տեսանք, շատ տարի չէր անցած. յետոյ Տուրայի վանաց և եկեղեցոյ ինչ ըլլալը՝ քննելի է Բըալէրի գրոց մէջ: Մենք մտաբերել տանք՝ որ այդ տեղոյ յիշալ փոքր եկեղեցին՝ յանուն Ս. Գրիգորի՝ անտարակոյս էր Լուսաւորչին մերոյ, զի և վկայուի ի ձեռս Հայոց ըլլալն: Երկրորդ մտաբերելին է՝ մեծագոյն եկեղեցոյ շինութիւնն և վանաց պայծառութիւնն, շնորհիւ մեծազօր Հայ վրդերկին (Պատր ալ-ճամալի կամ Ամիր ալ-ճիւլիւշ) և մեծափայլ Գրիգոր Վկայասէր կա-

թողիկոսի: Տեղեացս մտ լերանց գագաթում Ալ-Քուսայիր վանաց Մելքիդաց եկեղեցիները ստորագրելու ատեն՝ կու յիշէ Աբուսահլ Քաշիրէի պարսպներու շինութիւնը Ալ-Մուսղանղիր խալիֆայի և Ամիր ալ-ճիւլիւշ Պատրի ատեն. այս տեղ ծանօթաբարն յիշէ ըստ Մաքրիզեայ, որ նախ Ալ-Մելիզղ խալիֆայի ատեն շինուեցան պարսպ Քաշիրէի, յամի 969-70. բայց դար մի վերջը 1087, մեր Պատր վզուրկն՝ փուց զանոնք և աւելի ընդարձակ շինեց, Յովհան կրօնաւորի մի վարպետութեամբ, որ Քուսայիրի եկեղեցեաց մէկին մէջ թաղուած է: Գար մ'այլ վերջը՝ Սալահատտին նորոգեց և մէկ կողմէն ընդարձակեց. իսկ հիմակուան վիճակի մէջ՝ աւելի Պատրի շինութեան մնացորդք կ'երեւին քան ուրիշներուն:

Պատրի յիշատակ մ'այլ կ'ընէ Աբուսահլ՝ Նուբիոյ տեղագրութեան մէջ. երբ յիշէ այդ երկրին Սողոմոն թագաւորը, որ քաղաքական հոգեբը թողլով, Ս. Ոստիբրիոսի նուրած եկեղեցոյ մէջ աղօթքով կ'անցընէր ժամանակը. երբ այս բանս իմացուցին Մուսղանղիր խալիֆայի,

« Ամիր ալ-ճիւլիւշ Պատր վզուրկ՝ մարդ » խաւրեց և բերել տուաւ զնա ի Քաշիրէ. և

« երբ հասաւ քաղքին դրան, մեծ հանդի-
 » սիւ և պատուով և երաժշտաց գունդով մի
 » ընդունուեցաւ, ընտիր հեծնելու ձի մ'այլ
 » ղրկուեցաւ իրեն. հրամայեց (վզուրկն) տէ-
 » բուծեան պատուաւոր անձանց՝ որ ազէկ
 » հոգան զնա. և յետոյ բնակեցուց վայելուչ
 » տան մէջ, ճոխաբար զարգարած մարմար
 » քարամբք, քանդակագործ տախտակներով,
 » գոյնագոյն և ոսկեթել հիւսուած զիպակ-
 » ներով: Տարի մի ապրեցաւ նա այս տեղ-
 » և վզուրկն ստէպ կ'երթար զինքը տեսնելու,
 » այլևայլ իրաց վրայօք խօսելով հետը, և
 » ուշ զնէր անոր ըսածներուն. և կու տեսնէր
 » որ նա միայն փափագէր Աստուծոյ, — ու
 » բում փառք և գովութիւն, — բոլոր սրտով
 » և մտօք հրաժարելով ամեն մարդկային բաղ-
 » ձանքներէ: Այսպէս տարի մի ապրելով թա-
 » գաւորն՝ մեռաւ. և թաղուեցաւ ի վանս Ս.
 » Գէորգայ յ' Ինանտաք (յարուարձանս Գա-
 » հիրէի) ի պատրիարքութեան Կիւրղի ԿԶ
 » պատրիարքի. զերեզմանն եկեղեցւոյ պա-
 » րըսպին մէջ է, մօտ ի դուռն եկեղեցւոյն,
 » մոնողին աջակողմը: . . Եւ կոչուեցաւ Սուրբ
 » թագաւոր »:

Պատրի ստէպ երթալ տեսնուիլն և ուշա-
 դրութեամբ մտիկ ընելն այդ բարեպաշտ

թագաւորին խօսից, զուշակել տայ իր խղճի
 տագնապը կամ երկմտութիւն մի. վասն զի
 ինքն այլ երկմիտ և կէսկէս էր, կէս քրիս-
 տոնեայ և կէս մուլման. և այնքան քրիստո-
 նէից պաշտպանելն և եկեղեցւոյ մէջ թա-
 դուիլն (ինչպէս առաջ յիշեցինք), երեւցնէ,
 որ թէ արտաքուստ չէր, ներքուստ իր հայ-
 բենի կրօնքը չէր ուրացեր: Խորագէտ մարդ,
 զգաստ պաշտօնեայ, քաջ սպարապետ, փա-
 աւուր իշխան և վզուրկ, նեցուկ պետութեան
 Եգիպտոսի, և գրեթէ վարիչ՝ 20 կամ աւելի
 տարի. բայց ոչ կատարեալ արխաիրտ, զի
 ոչ պարզահաւատ՝ առաջի մարդկան. գոնէ
 իր վերջի մտածութիւնն մեզի անյայտ, Աս-
 տուծոյ յայանի: Իր մահն հանդիպեցաւ յա-
 մին 1094. աշխարհօրէն ոչ միայն մեծ փառօք
 և համբաւով, այլ և յարգանօք և սիրով.
 որով իր յաղթութեանց առաջնորդուած զօ-
 րականք՝ մէկէն իրեն տեղ հոշակեցին և նըս-
 տուցին վզուրկ իր սրգին, Շահնշահ Ապու'լ
 խասիմ, որ հասարակօրէն յԱրաբաց Ալ-Աֆ-
 տալ կամ Աֆսալ կոչուի, *الافضل شاهنشاه*,
 և երեք խալիֆայից ատեն իրր 30 տարի վարեց
 իր մեծ իշխանութիւնը հօրը նման, նա և ըստ
 հաւատոց. բայց ոչ անոր պէս խաղաղ վախ-
 ճան ունեցաւ, այլ սպանութեամբ, յամի

1122: Մաքրիզի և ուրիշ Արարացի պատմիչք շատ անգամ յիշեն զնա. իսկ ԱրուսաՀէ ի ստորագրելն զվանքն Թամալայիհ, որ ի հաւրաւակողման Տուրայի, կ'ըսէ.

« Եահնշահ շատ հեղ կ'իջեվանէր այս » վանքիս մէջ, և ատեն կ'անցընէր խառնափնդոր ու վայրապար. վանքին քով այլ պարտէզ մի յարդարեց, ամեն տեսակ ծառ և արմաւենիներ տնկելով. աղբիւրներ այլ վազցուց, վրանին ջրագարձ անիւներով. թանձր ցանկով մ'այլ շրջապատեց պարտէզը: Վանացս տարեկան հարկն առ զանձարան տէրութեան՝ 11 դենար էր. յետոյ այս հարկս դադրեցաւ, և անոր ստակով ձիթահանք շինեցին վանաց պարսպին մէջ, ամենայն մասամբք կատարեալ: Վանքն 47 ֆետգան (իբր 200 հազարչափ քառակուսի) երկիր կալուած ունէր, զոր գրաւեցին Ղուզք և Քուրդք՝ Կասր Երուսուֆ (Սալահատահինի) թագաւորութեան ատեն: Այս վանացս մէջ հանգչէր մարմին (Ս.) Պափնուտիոսի, որ վանացս առաջնորդ եղած էր, և տօնն կատարուի ի 15 Ամշիր ամսոյ. պատկեր մ'այլ կար այս տեղ՝ Տիրամօր անարատ կուսին Մարիամու: — Ալ-Աֆտալ (Շահնշահ) այն տեղ՝ շինուածքին վերնայարկին մէջ՝ նստած կու զուարճանար »:

ԱրուսաՀէ ուրիշ տեղ մի՝ Համրա թաղին մէջ Ս. Ոնոփրիոսի վանքը ստորագրելով, կու յիշէ Եահնշահի գրագիրը,

« Եէյե Ապու'լ Ֆատլ Իպն Ուսքուֆ կու » չուած, որ հանապազորդէր աղօթելու այս » եկեղեցոյս մէջ և հաղորդուելու. և յետ » հաղորդութեան ամեն օր որ դարձ քահանային համար պնակին մէջ դենար մի կու » ձգէր, անոր պաշտօնակատարութեան և » անոյ ձայնին հաւնելով: Այս քահանայն՝ » Պահր ալ-ձիդէ (ծովակին) մէջ խղղուեցաւ. » Ստուած հանգիստ պարգեւէ հոգւոյն:

Եզիպտոսի ուրիշ արարագիր պատմիչք աւելի երկար այլ պատմեն Աֆտալի մահը և գործերը. որոց մէջ նշանաւոր է՝ Երուսաղէմի Ա Պալատին թագաւորին հետ կուսիլ և զինադուլ ընելն. յամի 1115: Իսկ իր մահուան պատճառէր իր մեծ և համարձակ իշխանութիւնն. ուսկից վախնալով Ամէր խալիֆայ, փորձեր է, կ'ըսեն թունով մեռցընել. և չյաջողելով, այն ատեններ անուանի Սրիկայից կամ իշխանասպան Աւագակաց ձեռք՝ գաղտուկ սպաննել տուեր է, կամուրջի մի մօտ նեղուց տեղ մի. ուր որ յետոյ (1129-30) զինքն այլ սպաններ են ընկերք նոյն աւագակաց, գրգռուած Աֆտալի հօր և իր

բարեկամներէն : Սորա սպանուելէն ետե՛լ
Ամէր բանտել տուեր էր անոր Ապուհալի
Անկետ որդին , և գրաւեր ստացուածքը ,
որ զատ տեսակ տեսակ նիւթերէ , զուտ ստակ
չորս միլիոն ոսկի ունէր : Ամէրի սպանողք՝
հանեցին զԱպուհալի ի բանդէ , և վարուկ
ու զօրապետ կարգեցին իր հօր և պապուն նը-
ման : Անոնցմէ աւելի իշխանասէր և յանդուզն
երեւցած համարուի սա . իբր զի , Ամէր ա-
բու զաւակ չունէր , և ըստ իրենց օրինաց
կանայք չէին թաղաւորեր . և զի իր կինն
յլի էր (իր սպանուած ժամանակ) սպասէին
Եգիպտացիք իրենց բաղդին , Ապուհալի այլ
իրենին : Կինն ծնաւ աղջիկ . Ամերի եղբայրն
Հաֆըզ՝ իսկոյն յաջորդեց . և տեսնելով որ
Ապուհալի բոլոր իշխանութիւնը և գրեթէ
զահն ալ գրաւել կ'ուզէ , տարի մի չանցած՝
(1130—1) սպաննել տուաւ զնա : Անունէն
յայտնի է որ սա այլ իր հօր պէս մուխման
էր . և չափազանց իշխանասիրութեամբն՝ կե-
նացը հետ իր հարց յիսնամեայ վղըրկութեան
այլ վերջ տուաւ :

2.

Եահնշահի մահուանէն տասն տարի մի
վերջը՝ ուրիշ Հայ վզուրկ միանգամայն և քաջ
զօրավար մի փառօք փայլել յԵգիպտոս . Աբու-
սահլի Զուհրեայ վանաց ստորագրութեան մէջ
յիշուածն թա՛ւ առ—տաշա Պեհրաւ ,
۱۱۳۱
ریخه ۸۷۰۰۰۱ . ծանօթ աղնուական ցեղէ Պահ-
լաուենեաց , ի մօրէ այլ Գրիդ . Մագիստրոսի
թոռն , հօրեղբայր Ս . Ներսիս Ծնորհալոյ և
եղբայր Գրիգորիսի եպիսկոպոսին Եգիպտոսի ,
Վահրաւ . ասոնց հետ եկած էր նաեւ միւս
եղբայրնին , Վասակ , զոր և Վասիլ և Եասայ
الیاصال կոչն արարացի պատմիչք : Ծնոր-
հալի իր Վիպասանութեան վերջ իր ցեղին
ազգաբանութիւնն ընելով , յիշէ զայս երեք
հօրեղբարքն այլ , նախ մեծ Վկայասիրին հա-
մար ըսելով , թէ յԵգիպտոս՝

« Անդ ի յաթոռն սուրբ եղեալ
Չառ ի քեռէն որդի ծընեալ
ԶԳրիգորիոս համանուանեալ...
Որ Յովսեփայ մեծին նմանեալ՝

Ըզհամագգիս ըզկնի ձըգեալ,
 Զարի եղբարս իւր քաջացեալ,
 Ըստ Յեսովայ զօրավարեալ.
 Որոյ Վահրամ վերածայնեալ,
 Միւսոյն վասակ անուանադրեալ:
 Որք վեհագոյն փառս ընկալեալ
 Եւ մեծարգի պատուոյ հասեալ.
 Ըզպատերազմ ազանց վանեալ
 Հակառակաց յաղթոյ գրեալ.
 Վասն այսորիկ շքեղացեալ,
 Եւ աշխարհի նոցունց տիրեալ » :

Տիրելն շատ է, բայց ստուգիւ տեսակ մի տի-
 րացեալ եւ պայազատել էր կէս դար, Պատրի
 և Շահնշահի վզըրկութիւնն. վասն զի թոյլ-
 սուութեամբ կամ թուլութեամբ խալիֆայից,
 իրենք հոգային թէ քաղաքական թէ զինուո-
 րական գործերը, և թէ տնտեսականը, այս-
 ինքն տէրութեան գանձն կամ եկամուտն. որ
 Պատրի վերահոգութեամբ, և Աշխահնալ
 մեծ զատիի մի գործադրութեամբ՝ տարեկան
 երեք միլիոն գենարէն աւելի էր. իսկ Շահն-
 շահ, կ'ըսէ Աբուսահլ, զխահարկը աւելցուց
 մինչեւ մէկ գենար և $\frac{3}{4}$: Ասոնց գործոց՝
 թէ ոչ շատ տարի՝ այլ շատ մասամբ հետե-
 ւող և յաջորդ եղան Շնորհալոյ գոված հօր-

եղբարքն, մանաւանդ երիցագոյնն Վահրամ՝
 թագ պետութեան մականուանեալն, հա-
 ւատարիմ ամիրապետին, հաւատարմագոյն
 Ամենապետին, հայրենի և պահլաւունի ցե-
 ղին կրօնապահութեամբ, և առաւելեալ իսկ
 քան զիշխանակից ազգակիցսն, ինչպէս քիչ
 մի յետոյ պիտի տեսնեմք: — Վահրամ՝
 վզուրկ եղաւ Հաֆըզ խալիֆայի ատեն,
 որ թուլութեամբ չէր կարող կառավարել. և
 նախ իր որդին ապստամբեցաւ և սկսաւ գու-
 րիչներն այլ գրգռել. զօրականք աղաչեցին
 և խալիֆայն հաւանեցաւ որ Վահրամ յանձն
 առնու վէզիրութիւնը, փոխանակ ապստամբ
 որդւոյն: Վահրամ որ Պատրի հետ Եգիպ-
 տոս եկած կ'ըսուի, և անոր օգնական էր և
 յառաջադէմ ի զինուորական կարգի, զիջաւ
 անոնց աղաչանաց, և իշխանութեան և բա-
 նակին զլուխ կենալով, երբ մօտեցաւ ի մայ-
 րաքաղաքն, ապստամբն (Աշխահն) թողուց
 փախաւ, և Վահրամ խաղաղացուց ու բարե-
 կարգեց աշխարհը: Բայց երբ երկու տարի
 վերջը (1137), Ռիւստովան Վալախի անուամբ
 մէկն նորէն գրգռեց զժողովուրդը, իբր թէ
 Վահրամ ամեն պաշտօն և պատիւ Հայոց և
 քրիստոնէից կու տայ, Հայոց հեծելազօրք և
 աղեղնաւորք ուղեցին նորէն հալածել զա-

պըստամբները. բայց Վահրամ՝ որ աւելի բարեպաշտ էր քան փառապաշտ, համոզեց զանոնք որ թողուն բնիկ երկրքոց իրենց հողը, և իրենք իրենց ստացուածքն առնուն երթան ի Սայխտ (հիմայ Սիւխիտ), ինքն այլ գնաց յ'այն կողմն, ի Թեբայիդ, ուր դեռ հին ճըզնաւորաց հետեւող վանքեր և վանականներ կային և ուր իր եղբայրն Վասակ իշխան էր: Ռիւտովան յաջողեցաւ յանկարծ վրայ հասնիլ, բռնել ու սպաննել զՎասակ. ուղեց բռնել և զՎահրամ, (և ըստ ոմանց բռնեց), բայց իմանալով որ նա քաշուած ի վանս՝ ճգնաւորի կեանք կ'անցընէ, թողուց ազատ, ու եկաւ մայրաքաղաքին մնացեալ Հայերը հալածեց, և Զուհրեայ վանքը աւրեց: Բայց ինքն այլ բռնուեցաւ և սպանուեցաւ: Խալիֆայն աղաչեց Վահրամայ՝ որ դառնայ իր վէզիրութեան աթոռ. սա յանձն չառաւ, այլ իրրեւ հիւր ատեն մի կեցաւ յարջունիս, և յետոյ ի վանորայս, մինչեւ ի մահն: Արուսահլ չի պատմեր այս բաները, միայն ի ստորագրութեան հոչակաւոր Ճերմակ վանաց, *بيير القديس*, կամ Ղփտեաց մեծ Ս. Ծնուտի կամ Ծանուտի, որ և Սանութիոս, կ'ըսէ:

«Վահրամ քրիստոնեայ Հայն՝ որ Աւ-

» Հաֆըզ Խալիֆայի ատեն վզուրկ եղած էր,
 » և յետոյ կրօնաւոր, այս վանացս մէջ միան
 » ճնացաւ, իր պաշտօնէն մերժուելէն ետեւ.
 » վերջը թէպէտ և խիստ շատ տկար և հիւ
 » ւանդ էր, բայց փափագեցաւ երթալ ի
 » Գահիրէ. ուր և տարուեցաւ, և դեռ ողջ
 » հասաւ »:

Ուրիշ նշանաւոր վանքի մի, Ալ ֆուսայի կոչուած (*القصية*) ստորագրութեան մէջ՝ յիշէ Արուսահլ զեղբայրն Վահրամայ. որ երբ այդ դարէ ի վեր (1010ին) աւրըտըկած և կողոպտուած վանքին համար հրաման տրուեցաւ կրօնաւորաց՝ նորոգելու,

«Աւ-Եասալ (Վասակ) եղբայր թաճ առ-
 » տալա Վահրամայ՝ սահմանեց այդ վանաց՝
 » իրրեւ փոխարէն վնասուն, 16 ֆէտզան եր-
 » կիր »:

Սյգ իրր ուխտատեղի պատուեալ վանքն՝ Եզիպտոսի արեւելեան կողմի լերանց վրայ շինուած է, յանուն հոչակաւոր Ս. Արսէն ճըզնաւորի, որ հօն թաղուած էր: — Յիշեալ տարածութեան չափն, մէկ ֆէտզան կամ ֆէտտան, 4200 քառակուսի Չափ (մետր) է:

Վահրամներէ և Վասակներէ շատ առաջ, և նոյն իսկ Արարացոց Եզիպտոսի տիրելուն

ժամանակակից և զործակից՝ ծանօթ և ուրացեալ հայազգի Վարդանն, որ առաջ Յունաց կայսերաց զօրավար ըլլալով Հռոմ կոչուի, **حاجى الان**, յիշէ Արուսահը, Արարաց զԷխատրին (Ամբ իպն ալ-Ասի), թէ բարեկամն էր, և Եգիպտոսի հարկապետ եղաւ, բայց յետոյ սպանուեցաւ յԱլքեքսանդրիա. սակայն ի հին Գահիրէ կոչուած և հիմայ Թուրադ քաղաքի՝ երկար ժամանակ լսուէր իր անուամբ Եուկայն կամ վաճառանոցն Սիւք Վարտան, **حاجى الان**, որոյ մօտ ճեմելիքն այլ կոչուէր Ապու Ֆարվայի զուկակ, **حاجى**: (Այս ետքի անունս՝ որ վաճառատուն նշանակէ, քանի մի հեղ յիշուած է յարձանագիրս Հայոց հըռչակեալ Անի քաղաքի): — Մեր համազգեաց այսպիսի բարձր գահերով և մեծամեծ պաշտամամբք հանդիսանալն յԵգիպտոս յ'է, ԺԱ, ԺԲ դարս, թէ այն երկրին թէ մեր երկրի պատմութեան մէջ նշանաւոր կէտ մ'է. որոյ զուգակշռեն անշուշտ ընթերցողք՝ մեր դարուս և այս օրերուս նոյն հին աշխարհին մէջ, մերձաւորապէս նման պատիւ և պաշտօններ վարած և վարող ճարտար ազգային փաշաներ և պէկեր, Պօղ. Եուսուֆեան, Արթին Չրաքեան և որդիքն՝ Եարուպ և Եուսուֆ, Կուպար, Պետան, Հ'քէքեան, Տիգրան Ապրոյ, և այլն:

Է.

Այլեւայլ յիշատակք Հայոց Եկեղեցեաց եւ Վանաց յԵգիպտոս. — Մինչեւ հիմայ մեր փոխազրած պատմական Հայոց յիշատակներէն դուրս, Արուսահը ուրիշ երկար կամ նշանաւոր բան մի չի գրեր մերայոց վրայօք, բայց եթէ անոնց ունեցած քանի մի եկեղեցեաց և վանաց, որ են հետեւեալքն, ըստ կարգի կամ շարքի իր գրոց, և ոչ ըստ դրից տեղեաց կամ աշխարհագրութեան:

Եգիպտոսի գերահռչակ բրգանց մօտերը՝ Տահուր գեղի՝ Գրիգոր Ալ-Քայիսի եպիսկոպոսին շինած Ս. Ստուռածածնի եկեղեցւոյն աւրուիլն ի հակառակութեան Ռայիհանեանց և Ճիւլիշեանց՝ յիշելն ետեւ, Արուսահը՝ Նեղոսի արեւմտեան ափէն կ'անցնի յարեւելս, կու հեռանայ մինչեւ մօտ յափուս Կարմիր ծովու, և կու ստորագրէ շատ անուանի և ցանկալի տեղ մի, կրօնական և կրօնաւորական նկատմամբ. ամենահռչակ Ս. Անտոնի վանքն և յետին հանգստարանն, որ քաղաքականօրէն հիմայ Իթֆիհ կամ Աթֆիհ վիճա-

կին վերաբերի: Այդ անապատ տեղն ընտրեց
կ'ըսէ « Անպա Անտունայն եգիպտացի, կամ
» Անտոնիոս, Ստողն անապատի և Հայր միան
» ձանց, սուսջին անապատակեաց: ... Այս
» վիճակին Իֆթիհի եօթն եկեղեցիք կան,
» վեցն Ղփտեաց, մէկն Հայոց, որ կոչուի
» յանուն Ս. Գէորգայ վկայի»: Շատ վայել
լուչ և գրեթէ անկարելի էր Հայոց՝ որք ա
մենայն արեւելեայց հետ մեծապէս պատուեն
զհասարակաց պատուելի «Նախասկիզբն միան
ձանց», որում այս բառերով սկսուած ար
ժանավայել շարական մի երգած են և երգեն
ամեն տարի, — որ անոր վերջին ճգնութեան և
ճգնակիր մարմնոյն հանգստարանին մօտ յա
տուկ վանք և եկեղեցի մ'այլ ունենային, որ
թուի թէ և շէն էր Աբուսահլի ժամանակ,
զի կան կ'ըսէ և ոչ կային եկեղեցիքն:

Մէյտում կամ Սաֆղ Մայտուն՝ ձիգէ գա
ւառի Զաւիէ վիճակի մէջ գեղ մի է, « ուր
» կայ եկեղեցի մի հասարակաց, երեք սեղա
» նովք. մէջտեղին՝ Ղփտեաց է, յանուն
» քաջ նահատակին Թէօդորոսի, երկրորդն՝
» Հայոցն է, յանուն փառաւորեալ վկային
» Ս. Գեորգայ, երրորդն նուիրեալ Տիրուհւ
» ւոյ կուսին Մարիամու՝ Մելքիտաց է »:

Ֆայում — Հին և անուանի քաղաք է

համանուն վիճակի, և այսպէս կոչուի Ֆիում
բառիւ Ղփտեաց, որ լիճ կամ ծով նշանա
կէ, քովի անուանի հին Մերիս լճին համար,
յորում շատ կոկորդիլոսք կային, այն պատ
ճառաւ կոկորդիլոսքիս անուանեցին, նա և
Արսինոյէ: Յաշխարհահամարի 1885 տարւոյ՝
26000 բնակիչ ունէր: Աբուսահլ կ'ըսէ, թէ
Քիֆո Մեստրեմի սրգին, թոռն Քամայ՝ շի
ներ է այս քաղաքս, և Յովսէփ նահապետ
նորոգեր է, և Նիւղոսաչափ մի հաստատե
ր է. յետ երկար ստորագրութեան՝ վերջացընէ
այսպէս. « Մելքիտք այլ եկեղեցի մի ունին՝
» Հայոց բաղին մէջ ». գուշակուի ուրեմն որ
մերոնք այլ եկեղեցի մի ունէին, զոր շի յի
շեր, և թէպէտ այս Ֆայումի վիճակին մէջ
25 վանք կային կ'ըսէ, բայց հազիւ երկու
կամ երեք եկեղեցի յիշէ, որոց մէկն յանուն
Միքայել հրեշտակապետի, շատ մեծ և շատ
գեղեցիկաշէն:

Պահումախս. — Այս տեղս յայտնի չէ
հիմայ, կ'ըսէ թարգմանիչն Աբուսահլի. իսկ
սա յիշէ հօս քանի մի եկեղեցի, որոց
մէկն յանուն Ս. Արմենիոսի, որոյ համար
Մաքրիզի գրեր է, թէ հնագոյն ճգնաւորաց
մէկն է և շատ հոշակաւոր. Ղփտեաց Ֆայում
աուրք քանի մի համանուն՝ Հարմանտա,

Հարմանս՝ Սուրբեր յիշեն, գուցէ հնագոյնն ազգաւ Հայ էր և մեր ազգի արեւմտեան անուամբն ճանչցուած և ոչ անձին բնիկ անուամբ: — Մաքրիզի այլ յիշէ Պաշ Հարսիկս վանքն Քաւ ալ-Խարապ կոչուած մեհենատեղւոյ մօտ, ուր շատ հին արձանագիրք կան, յիշեալն այլ անուանի սուրբ ճգնաւոր մ'է:

Ալ-Խուսուս. — Թէ և ոչ որոշակի բայց յայտնի է ասոր դիրքն, Սիւլուզ կամ Ասիուզ գաւառի և մեծ քաղաքին մօտ, որ հին ատեն Սայիտ կ'ըսուէր և ի Յունաց Լիւկոպոլիս, վերին Եգիպտոսի մայրաքաղաք, և հիմայ 30,000էն աւելի բնակիչ ունի: « Ի Խուսուս, կ'ըսէ Աբուսահլ, Ղփտիք եկեղեցի » ունին, Հայք՝ վանք մի քաղքին մէջ և երկու եկեղեցի, քաղքէն դուրս այլ երկու եկեղեցի »: Այս յայտնէ թէ Խուսուսի մեծութիւնն և թէ Հայոց բազմութիւնն այն տեղ, բայց պատմին չի յիշեր ատոնց եկեղեցեաց անունները, իսկ Ղփտեաց՝ քիչ շատ. և վկայէ որ այս Սիւլուզ գաւառին մէջ ասոնք հարիւրաւոր եկեղեցիներ ունէին:

Շինարա. — Գեղ մ'է ի Միջին Եգիպտոս, Նեղոսի արեւմտեան եզերքում, Ֆաշն կոչուած աւանին այլ արեւմտակողմը. 2700 բնակիչ ունէր յամին 1885, Ղփտի և Պէ-

տէվի. « Շինարա վիճակին մէջ, կ'ըսէ Աբուսահլ, Հայոց քրիստոնէից գաղթական մի հաստատուած էր, որք եօթն եկեղեցի ունէին, շատ բարեկարգ, քահանաներով և միարաններով. եկեղեցեաց մէկն էր յանուն Տիրուհւոյ անարատ Կուսին Մարիամու. մէկն յանուն փառաւորեալ Միքայէլ (հրեշտակապետի), միւս՝ երկու եկեղեցիք Ս. Մաքսիմոս (?), երկու եկեղեցիք յանուն Պարթիէլ հրեշտակի, եկեղեցի մի Բաստիլար? ܩܒܠܬܐ, կոչուած, եկեղեցի մ'այլ յանուն փառաւոր վկային Գեորգեայ »: Եօթն ըսաւ, ինն համբոց, հաւանօրէն յանուն Հրեշտակապետաց Պարթիէլի և Միքայէլի մէկ մէկ եկեղեցի ըլլալու էր, որով թիւն հաւասարի. իսկ վերջն թերին անունն և իսկն անծանօթ է մեզ:

Քալուսանա. — Ըստ Աբուսահլի այս տեղա Մարաղա կամ յոգնարար Մարաղաթ վիճակն մէջ էր, որ հիմակուան ձերձէ վիճակի պատշաճի, և կար հօն եկեղեցի մի Ղփտեաց, եկեղեցի մ'այլ Հայոց:

Աբուսահլի յիշած այլքան Հայոց վանաց և եկեղեցիներէ գատ, Մաքրիզի յիշէ մերայոց աւերակ վանք մ'այլ մօտ ի վանորայս Ս. Յովհաննու Գրեցւոյն և Ս. Անուրիոսի. որոց տեղիքն հաւանօրէն անծանօթ չեն գիտնոց:

Նոյն Մաքրիզի՛ յիշէ Ս. Մինաս անուամբ եկեղեցի մ'այլ Մտայ ճամբուն վրայ, ընդ մէջ ջրամզին և հողակոյտից, (իրեն ժամանակին տեղագրութեամբ). մէկ կ'ըսուի՝ բայց երեք եկեղեցիք էին իրարու կպած. մէկն Յակոբկաց, միւսն Ասորոց, երրորդն այլ Հայոց. ամեն տարի տօնախմբութիւն կ'ըլլար ասոնց մէջ, և կու ժողովէին քրիստոնէայք ի պաշտօն: Մաքրիզի ԺԵ դարուն առաջին կիսուն ատեն կու գրէր:

Արուսահլի պատմագրոց մէջ կարելի է քանի մի հարեւանցի նկատողութիւնք կամ աւանդութիւնք այլ գտուին՝ մեր ազգին և մեր պատմութեան մերձաւորք կամ յիշեցուցիչք. ինչպէս տեղ մի գերեզմանոց յիշելով՝ կ'ըսէ, թէ Նեստորականք և Հայք այլ իրենց եկեղեցեաց մէջ թաղուին. բայց առջի ըսածէն յայտնուի, թէ այդ տեղ յատուկ գերեզմանոց չունին: — Վերոյիշեալ Սիլուս (Սայխ) մեծ քաղաքին ստորագրութեան ատեն, եօթն դուռ ունի կ'ըսէ, որոց մին՝ յարեւելակողմն՝ կոչուի Պսպ այլ-Սրման, Հայոց Դռուն:

Եզիպտոսի բերոց և արդեանց վրայ խօսելով (Թղթ. 1), զատ յայլոց յիշէ և զըստուած «Իւղ Եողգամի, կարմիր Բողկի, Բալասանի իւղ, Ալիոն, Ապրամիս և Մեղր»

օղի »: Թարգմանիչն կ'ըսէ թէ Ապրամիս ܐܦܪܡܝܫ, յունարէնէ առնուած ἀβραμῆς, Նեղոսի ձուկ մի է ծանօթ, համեղ և կարմիր, և զարմանայ, թէ ինչպէս Արուսահլ՝ բուսական նիւթոց և իւղոց կարգին յիշէ զայն: Ինձ այլ տարակոյս զայ, միթէ չըլլայ ի մեր նախնեաց յիշեալ Ապրամ՝ Բալասանն կամ Բալասանի նման իւղն, որ և Ապրամիւղ զրուած կայ:

Շատ տեղ Եզիպտոսի քաղաքաց և զուսաց սկզբնաւորութիւնը պատմելով, Արուսահլ աւանդական ազգարանութեամբ Քամայ որդիք և թոռուք յիշէ, յատուկ և հասարակաց անձանօթ անուամբք, զորս՝ աւելի կամ պակաս՝ զուցէ յիշեն և ուրիշ արարացի պատմիչք. նախ քան զանոնք յիշէ և Նոյ նահապետի չորրորդ որդի մի՝ Ապու Նախտար անուն ܐܦܘ ܢܚܘܬܐ, իմաստուն և հնարող երկնագընտի, և եղանակաց բաժանման, և այլն, որ Ներբովթի ուսուցիչ կ'ըլլայ: Թարգմանիչն ամենեւին անձանօթ համարի այսպիսի անուն և անձն. որ մեզ թուի Միխայելի Ասորոց, Վարդանայ և այլոց յիշած Մանիսունն, իբր ծնեալ յեա ջրհեղեղի, հմուտ և հնարող յիշեալ զխութեանց, որոյ հարազատ քոյր էր Ասողիկ, ըստ մերոց:

Եզրիպտոսի հրաշալիաց մէջ, որ ըստ ոմանց քսան են, մէկ քանին յիշէ և Աբուսահլ, յորս և Շարժուն սրահն, **أسطرخانة التوحيد** մարմար քարէ, 17 կանգուն բարձր, երկու կանգնաչափ տրամագծով, որ տարւոյ մէջ որ մի կու շարժի: Ուրիշ արաբացի պատմիչք յիշեն՝ ոմն այս ոմն այն մնիրայ, որ՝ թէ մէկն զպչի՝ յալ ու ձախ կողմ կ'երերայ. և մէկն այլ կ'ըսէ, թէ այնքան զգալի չէ շարժումն աչօք տեսնելով սեան վրայ, հասպ անոր շուքին վրայ նայելով կ'իմացուի: Այս շարժումն Սիւնն կու յիշեցընէ մեզ Տաթեու վանաց Գաւազան ըսուած շարժուն սիւնը. (որոյ որպէսն և ձենն այլ նշանակուած է ի Սիւսական, երես 234):

Յիշեցինք որ Աբուսահլի գիրքն վերջանայ քանի մի քաղաքաց անձանօթ շինողաց յիշատակաւ. անկէ անմիջապէս առաջ, որ է ըսել վերջնութեբ տեղեկութիւնն, է սոսկ անկցորդ հատուած մի Թամանին տեղւոյ վրայօք. և է այս, « Թամանին **تمنين** կոչուած գիւղն » .
 » Ասոր մատերն է Քարտա (Կորդուաց) լեռն,
 » ուր որ Նոյի ատեն կեցաւ տապանն, ճիւտի
 » լեռնէն գալով. այնքան բարձր է, որ իրեն
 » հաւասար լեռ չկայ երկրիս վրայ, և անկէ
 » երկրիս շորս անկիւններն կ'երեւին: Վկայ

» Հնգամատեանն (Մովսիսի), թէ Աստուած,
 » որ գովեալ ըլլայ, հով մի փշեց երկրիս
 » վրայ, և ջուրերն սկսան նուազիլ, և աղ-
 » բիւրք անդնդոց և պատուհանք (սահանք)
 » երկնից դադրեցան, և ջուրք քաշուեցան
 » յետ 150 օրերու. և Նոյի նաւն կամ տա-
 » պանն՝ նստեցաւ եօթներորդ ամսոյն 27ին
 » Քրդաց լեռանց վրայ, ի գիւղն Թամանին
 » կոչուած, համեմատ առաջուց ըսուածին » :
 Աբուսահլ առաջուց բան ըսած չէ ասոր վը-
 րայօք, գուցէ գրքէն դուրս ընկած ըլլայ,
 կամ սկզբան պակասած թղթոց մէջ յիշուած
 ըլլար, ուր համարուէր Հայոց վրայօք գրելն:
 Գրեթէ համաձայն իրեն՝ շատ դարերով յա-
 ուջ գրած է մեր ծանօթ Մովսէս Խորենացին,
 Հոփսիմեանց ուղեւորութեան պատմութեան
 մէջ. « Գաղտ դնացեալ ընդ մէջ Կորդուաց՝
 » ընդ լեռան Սողոփ (կամ Սաղուփ) ի
 » Բերկրացուց գաւառին... Վասն այսր լե-
 » բին ասի յԱսորուց, թէ ի նուազել ջուրցն
 » հեղեղաց եկաց տապանն ի գլուխ լեբինն՝
 » որ է Սարարադայ. և ընդ մէջ անցեալ
 » Սղոցաձուկնն՝ արգելու դնան. և անուն
 » քաղաքագեղն կոչեցաւ թըլմնիս կամ թը-
 » մենի (կամ թեմենի). այսինքն, թէ յայտմ
 » տեղւոյ ոգիք ութ ելին ի տապանէն » :

Աւելցնեմք մեր հին պատմչին (Խորենացոյ) խորհրդածութիւնն այլ. « Բայց, այսօրիկ թէ » արդարք կամ սուտք՝ ինձ ոչ է փոյթ. բայց » միայն զի հաճեցուցից (ղընթերցողիդ) մը » տացդ զտարիանս, վասն այնորիկ գրեմ » քեզ զբնան »: Եւ դարձեալ աւելցնեմք, որ ինչուն հիմայ այլ լուսի այն կողմերում այն աւանդութիւնն, ութ և ըստ ոմանց քառասուն ոգւոց ջրհեղեղէն ետեւ հօն դադրելը: Յոյն հեղինակք այլ յիշեն այդ տեղ Սուրփիա գաւառ, ուր և հիմայ այլ կայ Պիրքէ տեղ կամ գեղ մի՝ համաձայն Բերկրացոց, որ պէտք էր գրուիլ Բերկրացոց. օրինակ մ'այլ գրէ Բագրացոց:

Գուցէ հաճոյ ըլլայ մերայոց՝ Աբուսահլի ըսած բան մ'այլ Ս. Թովմաս առաքելոյ վըրայ, որ Հայոց այլ քան դայլ շատ առաքեալս յատուկ սիրելի և պաշտելի է, և ուրոյ վրայ քրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ ինչուն մեր օրերուն՝ շատ ստոյգ և անստոյգ բան գրուած է: Գրեթէ ամենքն միարանին Թովմայի երթալուն ի Հնդկաստան և շատ կռապաշտներ՝ ի Քրիստոս հաւտացնելուն, ուր և ինչուն հիմայ մեծապէս պատուի նա, ի Մալապար: Աբուսահլ կ'ըսէ,

թէ՛ յետ քարոզութեանն և նահատակութեան՝ թաղեցին զնա մեծ եկեղեցոյն մէջ՝ որ իր կենդանութեան ատեն շինուած էր, յետոյ իր անուամբ կոչուեցաւ. երբ դրին մարմինը թանկագին և վայելչակազմ տապանի մէջ, տեսան որ աջն անապական մնացեր էր. այլ աւելի սիրեցին զնա և հաստատուեցան ի հաւատս: Բայց երբ եկեղեցիէն դուրս ելան՝ յանկարծ ծովուն ալիքներն խուժելով վիժելով եկան շորս կողմ պաշարեցին, և եկեղեցին անմտանելի եղաւ. սակայն ամեն տարի ի տօնի Սրբոյն՝ յետ քաշուէր ծովը, եկեղեցին բացուէր, և ինչուն հեռաւոր կողմերէ գային բաղմութիւնք հաւատացելոց. տապանն հանդիսապէս դնէին, և մէկ կողմէն ծակէ մի դուրս հանէին Թովմայի անապական ալըը, և անոր մէջ դնելով զՍուրբ Խորհուրդն, մի առ մի գալով հաղորդուէին. և երբ աւմենէն ետքը եկողն այլ ընդունէր զՍրբութիւնը, աջն ինքն իրեն կ'ամփոփուէր, քահանայք այլ դարձնէին զտապանն ի տեղը. երբ ամենքն ալ դուրս ելնէին և հեռանային ի ծովեզերքէն, ծովուն ջուրերն նորէն գային շոջապատէին ղեկեղեցին, մինչեւ ի միւս տարին:

Հայք կ'ընդունին Ս. Թովմայի նահատակ

կուելն ի Հնդկիս, բայց մարմինը չեն թուղոր անոնց, այլ իրենց. վասն զի Ասաքելոյն աշկերտներն, կ'ըսեն՝ ըստ Յայսմաուուրաց, գողցան բերին յԱսորեստան. ուսկից յետ շատ ժամանակի տարուեցաւ Հայոց Աղճնեաց գաւառին վան կոչուած տեղին, որ թուի Աւան. անկից այլ յետոյ տարին «ա» ռաջնորդութեամբ ըստափայլ աստեղն, գնա» յեալ հասին ի գաւառն Ոչտունեաց, ի վե» ռայ գեղջն որ կոչի Պարծիս. և անդ դա» դարեալ եկաց աստղն՝ ի բարձր և ի հայեակ տեղւոյ, և անդ եղին գնչխարս Ս. Առա» քելոյն ի քարեայ տապանի. և շինեալ ե» կեղեցի՝ եղին ի դրանդի եկեղեցւոյն. և շինեցաւ տեղին վանք միաբանակեցաց. և է մինչեւ ցայսօր» : Երանի թէ և ի մեր մինչեւ ցայսօրս՝ այնպէս ըլլար, յայտնի և արժանապէս պատուեալ :

Յետ ամենայն յիշատակաց Արուսահլի՝ որ մէկ կամ միւս կերպով մերագգեաց կրնային հետաքննական ըլլալ, և զոր մենք քաղելով թարգմանեցինք և ծանօթարանեցինք, որովհետեւ հեղինակին բուն նպատակն էր և եւրեցաւ՝ Ղփտեաց վրայ տեղեկութիւն տալ, ի մէջ բերենք անոնց մարդաթուոյ համար գրածն այլ, թէ և իրմէ չորս հինգ դար աւ

ռաջուան վիճակին, այսինքն Արարացւոց տիւրապետելէն (յամին 640) իբր դար մի ետքը. « Եգիպտոսի Նուսման գիրքն كتاب فضائل مصر, որոյ հեղինակն է Ալ-Քիխտի, » պատմէ, թէ Ալ-Վայիտ իպն Զուվաա ե» » կաւ յԵգիպտոս հարկ ժողուելու, Հիշամ » իպն-Աբդլմէլէի ամիրապետութեան ատեն, » (720-43 թու. Քրիստոսի), և ժողովրդեան » մարդահամար ընելու, և վեց ամիս կեցաւ » ի վերին Եգիպտոս, երեք ամիս ի Սառ» ըինն, 10,000 գեղէ աւելի համբեց, որոց » ամենէն փոքրին մէջ այլ 500 արու Ղփտի » կար, որով բոլոր (արու) Ղփտեաց թիւն » էր 5,000,000» : — Հիմայ այլ ըստ 1877 տարւոյ եղած ազգահամարի, Եգիպտոսի բոլոր բնակիչքն (բաց ի Նուբիոյ) 5,500,000 համարուին. յորս քրիստոնեայ Ղփտիք իբր կէս միլիոն, իսկ Ֆէլլահք (կամ Ֆէլլահներ) որ են արարախօս և մահմէտական Ղփտիք՝ 4,500,000. մնացեալքն են Պէտէվիք 300,000, Թուրքք 10,000, նոյնքան և Հայք, Հրեայք 20,000, Եթովպացիք, Նուբիք, Սուտանցիք 43,000, Ասորիք 7000, Յոյնք 20,000, այլ եւայլ օտարականք, եւրոպացիք 90,000 : Անցեալ դարուն վերջը Փոսնկաց քննիչ գիտնականք 2,500,000 համարելին. Հիմայ ոմանք

ինչուան 7 միլիոն : Իսկ բնակութեան տեղիքն՝
40 քաղաք, 3600 գիւղ : Ըստ 1847 հաշ-
վախ օմանց՝ 4450 էին գեօղք և քաղաք :
Հիմայ, բաց ի Սիւէզի պարանոցին կողմի եր-
կիրներէն (Սիւէզ, Իսմայիլիէ, Բորդ Սախ)
համարուին 60 վիճակք, 113 քաղաքք, 3340
գիւղք : Միջին իմն հաշուով թէ բնակարանաց
թէ բնակչաց թիւն իբրեւ կէսն է Արուսահլի
գրածին և ը դարու մէջ եղածին : Հաւանօրէն
մտտաւոր վերջի տարիներ աւելի ստոյգ մար-
դահամար եղած պիտի ըլլայ, զոր դեռ չու-
նիմք ի ձեռին¹ :

1. Յետ տպագրութեան բանիցս՝ շնորհի բարձրա-
պատիւ պաշտօնէից Արքայափայլ Խէտիլէին, ընդու-
նեցանք երկու հատոր մանրամասն աշխարհահամարի
1882 տարւոյ. յորում՝ յատուկ Եզրկոտոսի նշանակուին
6,806,384 բնակիչք, ի 13,113 քաղաքս, գիւղս,
աւանս, հանգրուանս, և այլն : Բնակչաց յիշեալ թուոյ
մէջ՝ միսյն իբր 100,000 են հաստատ բնակարան չու-
նողք :



ՅԱԻԵԼՈՒԱԾ



Որքան և մեր նպատակն էր լով Արուսահլի
աւանդած ազգային յիշատակները հրատարա-
կել, գրեթէ անհրաժեշտ հարկ եղաւ անոր
ըսածները բացատրել կամ լրացնել, մա-
նաւանդ իր նման և իր լեզուով գրողներով :
Բազմն այլ բերաւ այսպիսի մի. մեր (գի-
մացի երեսին) վերջին ծանօթութեան մէջ
յիշեալ գրոց հետ, զատ յայլոց՝ կային Փռան-
կաց պետութեան ուսմանց պաշտօնէի յանձն-
արարութեամբ՝ ի Գահիրէ եղած Հնարանա-
կան քննողաց տեղեկութիւններ, (Mémoires
publiés par les membres de la Mission
Archéologique française au Caire). որոց
մէջ կայ (Գ. Պրակ Գ. հատորի. 1890) ճօր
գրուած մ՝այլ, Պօղոս Ռաւէս գիտնականի,
Մաքրիզի արար հեղինակին՝ Գահիրէի տե-
ղագրութեան վրայօք. (Essai sur l'Histoire
et sur la Topographie du Caire, d'après
Makrizi. p. Paul Ravaisse). Ծանօթ է և յի-

չած այլ եմք, որ այս բաղմահմուտ արաբացի հեղինակն (յառուկ անուամբ թարխատտին) ԺԵ դարուն առաջին կիսում կու գրէր (+ 1441-2). շատ գրքեր քննելով և շատ ծերերու հարցընելով, Եգիպտոսի՝ և առանձինն անոր մայրաքաղաքի (Գահիրէի) վրայօք՝ այնքան ծանօթութիւն ժողոված է՝ որքան ոչ ոք, և երկար համբերութեամբ մանրամասն ստորագրած է. բնագիրն՝ որ Խիրաք (Տեղա գրութիւն) կոչուի, արդէն սպաղարուած է ի Պուլագ, յամի 1853. ամբողջ թարգմանութիւնն այլ սկսուած է սպագրիլ, իսկ մասամբ՝ արդէն ծանօթ էր արեւելագիտաց: Սպասելով հրատարակման ամբողջական թարգմանութեանն, առ այժմ Ռաւեսայ գրածէն կ'ուզեմք աւելցնել, Աբուսահիլ և մեր յիշած ազգային եգիպտական վզըրկաց վրայ՝ քանի մի տեղեկութիւն այլ:

Արաբացոց Եգիպտոսի նոր մայրաքաղաքն՝ Գահիրէ՝ շինուած է իբր ի վերջ Ժ դարու, (970 փրկչական թուին). մէկ մասին (վաճառափողոցի) շինող կըրնայ ըսուիլ նոյն ասեն՝ ուրացեալ զօրավարն Վարդան, որոյ անուամբ յիշուէր շէնքն շատ դարեր, և դեռ լուռի այդ անունն (կամ նոյն իրեն կամ ուրիշ անձին): Անկէ դար մի վերջը (107) իր համ-

ազգի մեծահամբաւ և զօրաւոր վզուրկն Պատրէլ-ճամալի էմիր էլ ձիւյիւշ՝ նորոգելով մայրաքաղաքը, իր մեծութեան և խալի ֆայից զօրութեան յարմար՝ նոր և մեծ վզրկաւրան մի շինեց (Տար էլ-Վիդարահ) ի Պէրճուան անուանեալ թաղի, որ յետոյ դեռպանաց ընդունարան եղաւ, և այնպէս այլ կոչուեցաւ (Տար էլ-գիլյաֆաթ)¹: Իր մեծօգի և գոռօղ օրդին և յաջորդն Շահնշահ, որ խալիֆայէն աւելի փառօք և զօրութեամբ կ'ապրէր², գոհ չեղաւ իւր հօր շինածովը. այլ արքունեաց և պետական շինուածոց հիւսիսային արեւելեան անկեան ընդարձակ կողմ մի գրաւելով, իբր 15 քառակուսի բնամուկ (քիւմետր), շինեց հոյակապ ամենաճոխ նոր վզըրկարան ապարանք մի, որ իր արարական անուամբ կոչուեցաւ Տար էլ-Աֆգալիյէ, և շէնքին զմբէթներուն համար՝ սովորաբար կու-

1. Իր շինածներէն մնացած է դեռ Զուէյլա կուռած մեծ դուռն, քաղքին հարաւ-արեւելեան կողմը:

2. Կերպով մի խալիֆայ ժամանակին երախտապարտ էր Շահնշահի. ասոր հայրն և Մոսկանդի խալիֆայն մէկ տարուան (1094) մէջ մեռան. Եգիպտացիք փոխանակ անոր Նեղար անդրանկան՝ երկրորդ օրդին (Մոսքալի պիլլահ) ընտրեցին. Աֆտաքին մեծ էմիրն ուղեց պաշտպանել Վիդար. Շահնշահ դէմ ելաւ, յաղթեց, զերկուքն ալ բռնեց, և սպառնոյց զՄոսկալի:

չուէր Տար էր-Ֆոսպպ (Գմբեթաւոր¹ ապարանք), և աւելի յաճախ՝ Տար էր-Վեղի-րան էր Ֆոսպրա. Դահնշահի ամենայն յաջորդ վզուրկք՝ մինչեւ ի բարձուսն խալիֆայութեան և ի տիրապետութիւն Սալահատտին սուլթանի (1174), այս նոր վզըրկարանի մէջ բընակեցան. նոյն ինքն Սալահատտին այլ և իր առաջին չորս յաջորդք՝ մինչեւ ի շինութիւն նոր արքունեաց. և այսոր համար վզըրկատունն այլ այն ատեն (1174-228) կոչուեցաւ Տար եւ Սալդախի. յետոյ Դահնշահի շքեղ շէնքն այլ իր հօր շինածին պէս՝ Գեապանաց բնակարան կարգեցաւ, մինչև ի վերջ ԺԳ դարու. անկէ վերջը այլեւայլ իշխանազունք և պաշտօնեայք գնելով այդ ընդարձակ ապարանքը՝ իրենց ճաշակին համեմատ ձեւացուցին, մասն մասն քակեցին, նոր շէնքեր կանգնեցին. բայց մինչև ի ԺԵ դար այլ կ'երեւէին հին շէնքին մասեր. գուցէ դեռ շոշորդ մ'այլ նշմարուի:

Հիմնական տեղագրութեամբ՝ այդ վզըրկարանին արեւմտեան կողմն է Պապ էն-Նասր

1. Միթէ սյսպիսի վայելչութեան՝ եթէ բաղանեացն համար էր՝ որ Ատանայի մօտիկ տեղ մի Գ. Գեթե-ր / ու չուէր, մեծին Լեւոնի օրերէն ինչուան իր յաջորդաց վերջն այլ: (Տ. Սիսուան, 64. 555. 541):

փողոցն. արեւելեան և հարաւային կողմն՝ Մապիյատա փողոցն. հիւսիսայինն՝ Ճուվանիյէ: Դահնշահի գատակերան բոլոր քարաշէն էր և լաւ յղկած, այլեւայլ դստիկոններ և յարկեր բաժնուած. բազմաթիւ սրահներ և սենեակներ, պարտէզներ, բուրաստաններ, աւազաններ, և այլն, որոց ամենուն ջուր հասցընելու համար՝ 120 ագուգայք յարմարած էին: Ապարանից ամենէն նշանաւոր և թանկ մասն կամ տեղին՝ էր գանձարանն, (Խազիկա), խալիֆայից գանձատան նման, աւելի կամ պակաս հարուստ. ուր Դահնշահ և յաջորդքն՝ ոչ միայն ոսկի և արծաթ, գոհար և զիպակներ, այլ և պէսպէս շքեազ արուեստագործ նիւթեր ամբարած էին. որոց զինն և գումարն՝ սովորական ուժով՝ բայց իրաւամբ կըրնայ ըսուիլ՝ անբաւ և անհամար. արդէն յիշած եմք (յ'երես 44) Դահնշահի սպանման ատեն՝ իր գանձատան մէջ գտուած միլիոնաւոր ոսկին: Այս շքեազ և անգին նիւթոց ամենէն երեւելին կըրնամք ըսել՝ Դոսպարը (الشباك). այսպէս կոչուէր այն վանդակապատը՝ որ խալիֆայից ատենական դահլիճը կամ մեծ սենեակը՝ յերկու բաժնէր. մեծագոյն մասն կոչուէր էր-Ֆասան, ուր կենար ամէն ոք՝ որ տէրու-

Թեան պետին պիտի ներկայանար. իսկ սա-
բազմէր միւս մասին մէջ՝ որ կոչուէր էլ-
Մարտոշրա: Պատմեն, թէ քանի որ այս սո-
վորութիւնս չէր եղած՝ որ մի Իւմիխտաց
նահապետ Մուսվիէ խալիֆայն՝ Գամնակոսի
մզկըթին մէջ սըրոյ հարուած մի ընդունելով,
հնարեց այս միջարգել շուպպաքը. որ Պաղ-
տատի Ապպասեան աշխարհակալ ամիրապե-
տաց դահլըճին պատուարն եղաւ, և որոյ
դիմաց պատկառանօք և վախով կենային Ա-
սիոյ՝ (և երբեմն Եւրոպիոյ) ամեն պետու-
թեանց դեսպանք և իւր յատուկ տէրութեան
պաշտօնեայք. և ինքն ահարկու ամիրապետն
(խալիֆայն) ներսը ի մաքսուրայն՝ բարձր
գահու վրայ բազմած և ծածկուած, վճռական
պատգամները կու հրամայէր: ԺԱ. դարու կի-
տում մեծ չփոթութիւն և ապստամբութիւն
մոեզաւ ի Պաղտատ, և ամիրապետն (էլ-
Քայիմ) փախաւ. այն չփոթից ատեն ամբոխ-
արարք կողոպտեցին արքունեաց կահն ու
գանձը, և զրկեցին Եգիպտոսի խալիֆայից-
երբ Սալահատտին տիրեց ասոնց գահուն,
Պաղտատէն կողոպտուած թանկագին իրերն
ալ դարձուց անոր ամիրապետին. ասոնց
թուէն էր այդ երկդիմի բազդի վարագոյր
շուպպաքն այլ, երկաթէ գարբնած շատ ճար-

տար արուեստով վանդակն, հաւանօրէն՝ ա-
ւելի ազնիւ մետաղով օծուած և զարդարուած:
Կամ մեծութեանն համար, կամ իրեն յար-
մար համարելով՝ Սալահատտին չչարժեց
զայս տեղէն. իսկ տեղն էր շքեղաշուք Շահն-
շահի դահլիճն կամ ատեանն. ուր, նմա-
նելով տիրապետ խալիֆայից, իր մեծութեան
և իրեն դիմադներուն միջարժին կանգներ
էր այդ նշանաւոր շուպպաքը: Երբ յետ ժա-
մանակաց՝ Գարասնքոր էմիրն՝ Շահնշահի
ապարանից գետնին վրայ շինեց իր հոյակապ
չիրիմը, անոր մեծ պատուհանին վանդակը
բաւ շուպպաքը կամ ասոր մէկ մասը. շիրիմն
կանգուն կայ մինչեւ այսօր. բայց այն պա-
տուհանն պատով հիւսուած է, և չի գիտ-
ցուիր թէ արդեօք հօն ծածկուած մնայ այն
խորհրդաւոր վանդակն, որ Շահնշահի ճո-
խութեանց գլխաւոր մէկն եղաւ:

Իրմէ վերջը իր գանձարանին մէջ պահուե-
ցաւ պժգալի հաւարում մ'այլ. — Խաղի-
նար էր—րոտա. այսինքն, գանձ (կտրած)
գլխոց՝ երեւելի իշխանաւոր անձանց. որոց
առաջինն եղաւ Ստիլ խպն—Սալար վզուրկն,
յաջորդն Ռոտովանի: Ի կարգի պատմութեան
Արուսահլի յիշուեցաւ այս ետքինիս գործը,
և մեր Պահլաւունի վարդանին նախ դիմա-

դրութիւնը, ապա յետ քաշուելն. Մարբիղի՝ որ զսա թագաւորաց թագ կոչէ, թա՛ճ էլ Մուշոք, ասկէ առաջ և յետ Ապու Ալի Ահմէտի՝ Շահնշահի որդւոյն՝ (զոր և Քարիրար կոչէ), ուրիշ հայ վզուրկ մի եւս յիշէ, Եւսնիս Նազիր—էլ Գիշիշ անուամբ, (1131+4 միջոց), որ գուցէ նոյնպէս Շահնշահի որդի մի էր, և նոյնպէս բռնամահ եղած է: Ասոր յաջորդին յաջորդն էր զլիստտեալն Ատիլ (1153)․ ասոր այլ յաջորդ Ապպաս իպն Ալի՛լ Փութուհ, խռովութեան ժամանակ․ զոր դագրեցուցեր է զօրաւոր Հայ մի, Ապու՛ղ Ղալաս թարայի կոչուած, և եօթն կամութ տարի (1154—61) նստեր է վզուրկ․ բայց ինքն այլ սպանուեր է․ սակայն յաջորդեր է իր որդին Ապու խօճայ Ռուզեիք՝ 1. որ՝ չգիտեմ ինչպէս

1. Գսա և իր որդին՝ Զարեհ կամ Զառիկ անուանելով յիշած էինք ի Ն. Շնորհ. և Պարսկայն իր: Թաււայի՛ կրօնական հաճոյ գործ մի ըրած էր Եգիպտոսացոյ. ասոնք դաւանութեամբ պարսկադէն իսլամ էին, այսինքն շիւ. որոց, ինչպէս յայտնի է, մեծ պաշտպանք և պատուելիք են Ալի մաքրապետին նահատակ համարեալ որդիքն, Հասան և Հիւսէին. ետրինիս զլուին՝ երբ և է՛ յԱսկարոն բերուած պահուէր, երբ թաշակիւք եկան այս կողմերը, Շահնշահ գալով յայս քաշաքս՝ այդ գլուխը նորէն զմուսնել տուաւ, և վրան մաւտու մի շինեց. բայց Եգիպտոսիք միւս կասկածէին

վախճանած է: Մարբիղի յիշէ ասոր կամ իր հօրը շինած գեանափոր տեղ մի՛ հանդերձ փականօք՝ վզըրկանոցին մէջ: Սա յետին հայազգի վզուրկ եղած է՛ ի կարգի եօթանց՝ որք դար մի ժամանակի զրեթէ երեք մասին՝ այդ գերագոյն եգիպտական գահը բազմեր են, բազում կամ քաջութեամբ, օտաւրաց մէջ, օտարացեալք ի հայրենի հաւատոց, բաց ի Վահրամայ. մինչ ի նմին ժամանակի (Թի դարու) իրենց զբաւած երկրին զրեթէ սահմանակից երկրի (Վիլիկիա) մի մէջ, հաւատարիմ ազգակիցք (Ռուբինեանք) Տօրոսի քարուտ կողերը մագըլցելով՝ ոտն առ ոտն առաջ անցան, իջան կուսելով ու կորցելով և լեռ և դաշտ և ծով, և կանգնեցին իրենց տուն և տէրութիւն. և երկար տարիներ Սալահատտինի յաջորդ քուրդ և մէմլուք սուլտանայ հետ գործակցութիւն ունեցան՝ բա-

թէ օր մի շանարդէն զայն քրիստոնէայք: Հիմայ թաւայի յորգորից զիսալիֆայն, և ճարտարութեամբ վերցընել տուաւ յԱսկարոնէ և բերել ի Գահիրէ (1135), ուր մզկիթ մ'այլ շինեց (Ճամի Սալիհ) և հօն կ'ուզէր քնել. բայց ժողովուրդն ստիպեց որ (Գուպլէթ էտ—Տայլամ կոչուած) հասարակաց մզկիթին մէջ գրուի. որոց գմբէթն այլ նորոգելով կոչեցին Մաւսա Հիւսէյէնի. որ իբր դար մի վերջը՝ (1242) հրդեհով բուրովին այրեցաւ:

րեկամարար և թշնամարար, որոց՝ վերջապէս նուազած և նուաճուած՝ թողին իրենց ոսկիներով և ոսկորներով լի և գատարկ երկիրը. բայց թէ հօն և թէ դուրսը՝ թողին նա եւ մշտաւոր և հեշտաւոր համբաւ միմինչ այդ ընդվզեալ վզըրկաց անուանքն՝ հազիւ նշմարուին ի գիրս. և թէ քրքրեն զմիտս, ոչ գրգռեն զսիրտս. նա և տխրախառն զարմանք մ'ազդեն, երբ միաժամանակ և իբր ի միում թատեր, դէմ ընդ դէմ երեւին՝ այն Միջագետաց և Կիլիկիոյ Հայ իշխանք՝ ձեռնտուք, և այդ վզուրկքդ՝ հակառակողք խաչակրաց: Պատմիչք և երգիչք յետնոցս՝ հարկ էր որ յիշէին անոնց անունը կամ գործն եւս: Պատմութեան այս ամենամեծ մէկ դիպուածին ատեն (խաչակրաց Երուսաղեմի տիրելուն), Եզրիպտոսի վզուրկ էր վզըրկաց գոռոզագոյնն՝ Շահնշահ, միանգամայն և զօրապետ և ամենապետ. հարկ էր՝ որ թէ ոչ անձամբ՝ երեսփոխանով մի ելնէր անոնց դէմ. և ահա այս նոր դիւցազանց զովասանից դասապետն՝ Գասսոյ, (որոյ՝ յանկարծ մահուանէ զրկած քերդողայաղթ սրակն՝ այս տարի (1895), փառաւորապէս տրուեցաւ ի յիշատակի իր 300ամեայ յորելինին), իր դիւցազին (Կոփրետոսի) արժանաւոր զիմամարտ հաներ

է զՀայն Էմիրէն. որ՝ յետ ամենայն ջանից և քաջութեանց՝ խոցելով զմեծն այն Բույլիօն (Կոփրետ, il maggior Buglione), ինքնին կանչէ, « Ահա կու գամ քու ձեռքէդ մեռնելու » .

Ecco, per le tue mani a morir vegno.

ինչ որ պատմիչ մեր (Մ. Խորեն.) փափագէր իր հին դիւցազին (Չարմայրի) համար. « Կա » միմ յԱքիւլլեայ, և մի յայլ ումեքէ ի » քաջացն » : . . . Աքիւլլէս և Կոփրետ. Չարմայր և Էմիրէն. Տրոյա և Երուսաղէմ. Հոմեր և Գասսոյ! Ի՞նչ զարմանալի զուգաւորութիւնք պատմութեան և երեւակայութեան!



Յ Ա Ն Կ

Ա Ն Չ Ա Ն Յ Ե Ի Տ Ե Ղ Ե Ա Ց



- Աբբա ալ-Վահագն աղ-Չուհրի 29
Աբուսահլ 6-11. 27. 51. 65
Աբղ-Հասան Պատիւանի 27
Ալեքիւն Իթֆիւն (Թար) 24. 51
Ահքամբ'լուս խալիֆ 22
Ամեր խալիֆ 45
Այգետանն ա. ալ Պուսալան
Անանիա եղբ. Եղեղա. 19
Անուր ճգնաւորի վանք 55
Ս. Անտոն և վ. 51
Ապու Ամ որդի Շահնուհի 44. 72
Ապու'Լ Ֆարաճ ար-Տայխ 9
Ապու Նայխուր ա. Նայի 57
Ապու Պէքր եղբայր Սալահաւտիի 54
Ապուսա իպն Ալի'Լ Ֆուլմուճ 72
Ատիւ իպն Սալար 71
(ալ) Ասհրա Էկեղեցի 19
Ս. Արմենիոս 55
Ս. Արսէն 49
Արսիւնյէ ինճ 55
Ասաղակք 45
Աֆտալ. ա. Շահնուհի
Բատուղար ? 55

- Բրտի վանք 36
 Գահերէ 15 · 19 · 22 · 38 · 65 · ևն
 Գասիմ Խալիլ բժիշկ 27
 Գասար ազ-Չիւմրիւս 21-2
 Ս. Գեորգ վանք Հայոց 52
 — Եկեղեցի 36 · 40
 — — Է Մայտում 52
 — — Է Շենարա 55
 Գրիգոր Վկայասէր 16 · 24 · 36
 — Կրեղթօրորդէ Ն. Շնորհ 50 · 45
 — քերտրդէ Վկայասիրի 17
 — Տղայ 32
 — ալ Քայլա եզս · 15
 Ս. Գր. Եկեղ. Է Տուրա 37
 Դաստոյ 74-5
 Եանիս Նաղիբ ԷԼ ճիւղիւշ 72
 Եգիպտոս 65-4
 Եսայի եզս · 28
 Եւտիբիոս (Սայլա) 44
 Զաւիէ վիճակ 52
 Զաւիւա · Զուվայիւս 22 · 25 · 31
 Զմբխոսեայ պալատ 21
 Զուհրի վանք 27-9 · 31 · 48 ·
 Էմիլիէն 74-5
 Թաւայի ազուլ Ղարատ 72
 Թաճ առ-տաւաւա տ. Վաչքամ
 Թամայի՛ վանք 42
 Թամանին դեօղ 58
 Թաքիաստին Մէլիք 51 · 54
 — տ. Մաքրիզի
 Ս. Թեոդորոս Եկղ. 36
 Ս. Թովմաս վ. Է Հայս 60

- Ս. Թովմաս Եկեղ. Է Մաւապար 62
 Ինանասք թաղ 40
 Լիւնն (Մեծագործ) 32
 Խաչքալ զատի 46
 Խաչակիւք 74
 (Աւ) Խուսուս 34
 Կիւրեղ պատրիարք Ղլտեաց 56 · 40
 Կոփրեա 74
 Հայք յԵգիպտոս 12 · 16 · 18-22
 — Վլուրիք 35 · 41-8 · 69-72
 — Պալատեակք 50 · 50 ·
 — Վանորայք 52
 — Դուռն Է Սայլա 56
 Հաչէն ամիրապետ 47
 Հասան ո. Ալեայ 72
 Հատալպա Ղուզի 20
 Հարաթ ար-Բում թաղ 50
 Հարմանուս տ. Արմենիոս
 Հաֆրդ Խալֆ · 24
 — ալ Իմամ 53 · 44
 Հիւամ ամիրապետ 65
 Հիւսէին ո. Ալի 72
 Հիւսէյինիէ թաղ 20
 Դուզք · Դոզք · 18 · 22 · 42
 Ղլտիք 29 · 32 · 34 · 54
 Ճերմակ վանք 48
 Ճիզէ դաւառ 82
 Ճիրճէ վիճակ 55
 (Էմիլ ալ) Ճիւղիւշ տ. Պատր
 Ճիւղիւշիէ դօրաստումբ 20
 Ճիւտի լիբիւք 58
 Մաւապար 60

- Մահացող եզր 44
 Մայրուհի գլ. 52
 Մանկանոն ո. Նոյի 57
 (Ապու) Մանուկ 58
 Մաշտո Հեռեհին 75
 Մաշտո (Իսկ) 58
 Մայկյատա փողոց 69
 Մարաղաժի վիճ. 53
 Մարկոս պատրիարք 57
 — ալ Քանյար 40
 Մարրիդի 45. 55. 55. 56. 65
 Մեքլիտք 22. 52-5
 Մերիս վիճ 55
 Ս. Մերկեր կղզ. 56
 Մեմլուքք 75
 Ս. Մինաս կղզ. 57. 56
 Մրւալիէ ամիրսյ. 70
 Մեհրդ խարթ. 59
 Մեքայէլ հրեշտ. կղզ. 55
 Մուզաֆֆար Մէլիք 54
 Մուզանդեր. խալթ. 45. 59
 Մար 17. տ. Գահիրէ
 Ս. Յակովբ կղզ. և Մար. 14. 16-7
 — վանք յԵրուզ. 24-5. 28
 Յովհաննէս Գըրեցի վ. 55
 — Ս. կղզ. 49. 25. 31
 Յովհաննէս պատրիարք 37
 Յովսէփ նահապետ 55
 Ներսէս Շնորհալի 43
 — կզր. Երուզ. 28
 Նորիա 59
 Նուբէտտին սուլթան 48

- Շնուտ հզնաւոր եւ վանք 48
 Ս. Ոնոփրիտի վանք 45
 Ուսթուֆ (Իսկ) շէյխ. 45
 Պալտին Ա. 45
 Պահումալիս 55
 Պահր ալ-ճիդէ վիճ 45
 Պապ էն-Նասար փողոց 68
 Պատր ալ-ճամալ 45. 47. 56. 59. 67
 Ս. Պափնուտ 42
 Պուստան (Այդեասան) թաղ 45. 29. 54
 Ռայանիէ դորախուսք 20. 54
 Ռիւսովան վալախի 47. 74
 Ռուբէն Բ 52
 Ռուբինեանք 75
 Ռուդէրք Ապու խօճա 72
 Սալահատտին 48. 51. 59. 68. 70
 Սահակ եպիսկոպոս Երուզ. 28
 Սայխ. Սեյիւտ վիճ. 48. 54. 56
 — Իսկ էլ Պատրիկ 44
 (Բորդ Սայխ 64
 Սայֆատտին կղզ. Սալահատտ. 54
 Ս. Սարգիս վանք յԵրուզ. 24
 Սողոմոն թաղ. Նուբիոյ 59
 Վահրամ վրուրի 22. 53. 45-8. 73
 — Սայխ առ-տաւա 50
 (Ա.Ա.) Վայխ Իսկ Զուլաա 65
 Վասակ եղբայր Վահրամայ 45. 49
 Վարդան Հոռոմ 60. 66
 Վըրդատուն Գահիրէի 67
 Տահուր գլ. 54
 Տուրա, վանք և կղզ. 56
 Քալաուն Նասար սուլթան 55

- Քաղուսանա 55
 Քայիմ անիրպ . 70
 Քիֆի որդի Մեհարեմի 53
 Քուսայիր վանք 59 . 49
 (Իսկն ալ) Քուսալա 57
 Քուրդք 18 . տ . Վուդք
 Ֆայում 52
 Ֆաշն 54
 Ֆարվա (Սպուռ) գուկակ 50
 Ֆարի ալ-Պահա 19
 Ֆարիս ատ-Թուսի 51 . 53
 Ֆուստատ . 9 . 29 . 50
-

6344

6345

6346

6347

6348

766T000

ՀՀ Ազգային գրադարան



NL0002305

ՀՀ Ազգային գրադարան



NL0002304

ՀՀ Ազգային գրադարան



NL0002303

ՀՀ Ազգային գրադարան



NL0002302

ՀՀ Ազգային գրադարան



NL0001997

